

**ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
(ՊՈԼԻՏԵԽՆԻԿ)**



Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

**2013/2014 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒՄ ՀՊՃՀ ԿԱՊԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

*/ընդունվել է Կապանի մասնաճյուղի գիտական խորհրդի
2014 թվականի նոյեմբերի 7-ի նիստում/*

ԿԱՊԱՆ 2014

ՆԱԽԱԲԱՆ

Սույն հաշվետվությունը ներկայացնում է ՀՊՃՀ (Պոլիտեխնիկ) Կապանի մասնաճյուղի զարգացման 2012-2016 ռազմավարական ծրագրի 2-րդ տարվա կատարողականը՝ ներառելով 2013/14 ուսումնական տարվա գործունեության, 2013թ. օրացուցային տարվա և 2014թ. օրացուցային տարվա առաջին երեք եռամսյակների ֆինանսատնտեսական գործունեության ամփոփումը:

Հաշվետու ժամանակաշրջանում շարունակվել են մասնաճյուղի ռազմավարական ծրագրի արդյունավետ իրականացմանը միտված աշխատանքները՝ դիմորդների հոսքի և ուսանողական համակազմի կայունացման, կրթության որակական աճի, կառավարման օպտիմալացման, կայուն ֆինանսական համակարգի ձևավորման, նյութատեխնիկական բազայի արդիականացման և պատշաճ ինֆրակառուցվածքի ստեղծման, տեղեկատվական համալիր ապահովվածության, գիտական ներուժի և արտաքին կապերի զարգացման ուղղություններով:

2012/13 ուսումնական տարին մասնաճյուղի համար հիշարժան էր 2013 թվականի նոյեմբերի 9-ին պաշտոնական կայքի գործարկման իրողությամբ:

2013/14 ուսումնական տարում մասնաճյուղի գործունեության հիմնական արդյունքների վերաբերյալ հաշվետվության մեկնարկը տրվել է ՀՊՃՀ ղեկավարի 2014թ. հուլիսի 31-ի թիվ 01-03/341 հրամանով:

Սույն հաշվետվության կազմմանը նախորդել են ստորաբաժանումների հաշվետվությունների քննարկումները: Հաշվետվությունը համալրված է նաև մասնաճյուղի ստորաբաժանումների կողմից առաջ քաշված հիմնավոր դիտողություններով ու առաջարկություններով:

**ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀՊՃՀ (ՊՈԼԻՏԵԽՆԻԿ) ԿԱՊԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Անվանումը	«Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան (Պոլիտեխնիկ)» պետական ոչ առևտրային կազմակերպության Կապանի մասնաճյուղ
Գործունեության հրավական հիմքերը	ՀՀ օրենքներ և իրավական ակտեր, ՀՊՃՀ կանոնադրություն, ՀՊՃՀ Կապանի մասնաճյուղի կանոնադրություն
Կառավարման մարմինները	ՀՊՃՀ Կապանի մասնաճյուղի գիտական խորհուրդ, ՀՊՃՀ Կապանի մասնաճյուղի տնօրինություն
Տնօրենի ժ/սյ	Պետրոսյան Լեոնիկ Նահապետի, մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
Տեղակայված է՝	
ՈՒՄԱ գծով	Սարգսյան Արթուր Մելիքսեթի, մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ
ԳԱ գծով	Բալասանյան Սեյրան Շամիրի, տեխն. գիտ. թեկնածու, դոցենտ
ՎՏԱ գծով	Հարությունյան Արմեն Հայկի

Կառուցվածքային միավորները

(01.09.2014թ. դրությամբ)

h/h	Անվանումը	Ղեկավար
1.	Ընդհանուր բաժին	Ավետիսյան Արուս Ռոբերտի
2.	Ծրագրամեթոդական աշխատանքների և կրթության կազմակերպման բաժին	Գրիգորյան Արամ Ժորայի, տ.գ.թ.
3.	Կրթության որակի ապահովման և արտաքին կապերի բաժին	Իսակյան Նունե Լիպարիտի
4.	Ֆինանսատնտեսագիտական բաժին	Քարամյան Անուշ Իշխանի
5.	Տնտեսավարման և սպասարկման բաժին	Պետրոսյան Արթուր Լեոնիկի
6.	Բնական գիտությունների և տեղեկատվական համակարգերի (ԲԳ և ՏՀ) ֆակուլտետ	Այվազյան Անահիտ Ապավենի, տ.գ.թ., դոցենտ
7.	Տեխնոլոգիաների և ճյուղային տնտեսագիտության (Տ և ՃՏ) ֆակուլտետ	Եղիազարյան Անիկ Վանյայի, տ.գ.թ., դոցենտ
8.	Գրադարան	Գրիգորյան Գոհար Կամոյի

Մասնաճյուղում ուսուցանվող մասնագիտությունները

Մասնագիտության անվանումը	Ուսուցման ձև	Դասիչը
Բակալավրի կրթական ծրագիր		
Տեղեկատվական տեխնոլոգիաներ	առկա և հեռակա	090100
Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում /լեռնամետալուրգիական ճյուղում/	առկա և հեռակա	080600
Շինարարություն, շինարարական իրերի և կառուցվածքների արտադրություն	առկա և հեռակա	270100
Օգտակար հանածոների հետախուզում և մշակում	առկա և հեռակա	130100
Մետալուրգիա և նյութագիտություն	առկա և հեռակա	150100
Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա	առկա	010400
Փոխադրումների և ճանապարհային երթևեկության կազմակերպում և կառավարում	հեռակա	190300
Միջին մասնագիտական կրթական ծրագիր		
Օգտակար հանածոների հարստացում	առկա	0904
Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում	առկա	2203

Մասնաճյուղի ամբիոնները

(01.09.2014թ. դրությամբ)

Ֆակուլտետի անվանումը	Ամբիոնի կոդը	Ամբիոնի անվանումը	Ամբիոնի գտնվելու մասնաշենքի անվանումը (համարը)
ԲԳ և ՏՀ	1.5.1.1.	Մաթեմատիկայի և բնագիտական առարկաների (Մ և ԲԱ)	գլխավոր մասնաշենք
	1.5.1.2.	Հումանիտար առարկաների և մարմնակրթության (ՀԱ և Մ)	գլխավոր մասնաշենք
	1.5.1.3.	Տեղեկատվական տեխնոլոգիաների, ինֆորմատիկայի և ավտոմատացված համակարգերի (ՏՏ Ի և ԱՀ)	գլխավոր մասնաշենք
Տ և ՃՏ	1.5.2.1.	Ընդերքաբանության և շինարարության (Ը և Շ)	ուսումնական մասնաշենք
	1.5.2.2.	Մետալուրգիայի և նյութագիտության (Մ և Ն)	ուսումնական մասնաշենք
	1.5.2.3.	Ճյուղային տնտեսագիտություն և կառավարում (ՃՏ և Կ)	գլխավոր մասնաշենք

Մասնաճյուղի լաբորատորիաները

Ամբիոնի անվանումը	Լաբորատորիաներ	Մասնաշենքի անվանումը	Ընդհանուր մակերեսը (քմ)
Մ և ԲԱ	Ֆիզիկայի լաբորատորիա-լսարան	գլխավոր մասնաշենք	52
	Քիմիայի լաբորատորիա-լսարան	գլխավոր մասնաշենք	48,2
ՏՏ Ի և ԱՀ	Ինֆորմացիոն տեխնոլոգիաների լաբորատորիա-լսարան	գլխավոր մասնաշենք	71,9
	Էլեկտրատեխնիկայի լաբորատորիա	գլխավոր մասնաշենք	22,1
	Քոմպիյութերային լաբորատորիա-լսարան	գլխավոր մասնաշենք	66,3
Ը և Շ	Ընդերքաբանության լաբորատորիա-լսարան	գլխավոր մասնաշենք	68,4
	Շինարարության լաբորատորիա	ուսումնական մասնաշենք	108,4
Մ և Ն	Մետալուրգիայի և նյութագիտության լաբորատորիա-լսարան	ուսումնական մասնաշենք	87,4

Ն Պ Ա Տ Ա Կ 1

ԱՊԱՀՈՎԵԼ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՄՈՒՏՔԻ ԲԱԶՄԱԶԱՆԵՑՈՒՄ ԵՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՐՏԱՔԻՆ ՄԻՋՎԱՅՐԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ, ԲԱՎԱՐԱՐ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՀԱՍՑՆԵԼ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄԸ

ԽՆԴԻՐ 1.1. Համապատասխանեցնել մասնաճյուղի ընդունելության կառուցվածքը և չափաքանակները աշխատաշուկայի և կրթաշուկայի պահանջներին:

2012/13 ուսումնական տարում ձևավորված ՀՊՃՀ Կապանի մասնաճյուղի 2012-2016թթ. բակալավրի կրթական ծրագրով ընդունելության մասնագիտությունների կողմնորոշիչ հեռանկարային ցանկի հստակեցման, ինչպես նաև՝ մասնագիտական աշխատաշուկայի առկա պահանջների ու միտումների, պոտենցիալ դիմորդների մասնագիտական կողմնորոշվածության ու կրթական կարիքների, արտաքին բարենպաստ հնարավորությունների և ներքին չօգտագործված կարողությունների (հաշվի առնելով նաև ՀՊՃՀ Երևանի կրթահամալիրի հնարավոր աջակցությունը) բացահայտման ու գնահատման նպատակներով հաշվետու տարում իրականացվել է մասնաճյուղի արտաքին և ներքին միջավայրերի վերլուծություն, որը թույլ կտա ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտությունների և որակավորումների նոր ցանկի հաստատումից հետո կազմել ընդունելության մասնագիտությունների հստակեցված հեռանկարային ցանկը:

Ուղենիշ ունենալով Սյունիքի մարզի տնտեսության զարգացման գերակայությունները և հաշվի առնելով մասնագիտությունների կանխատեսվող պահանջարկն ու ներքին հնարավորությունները՝ 2014 թվականին մասնաճյուղում առաջին անգամ ընդունելություն կատարվեց բակալավրի կրթական ծրագրով հեռակա ուսուցմամբ «Փոխադրումների և ճանապարհային երթևեկության կազմակերպում և կառավարում» ու «Տեղեկատվական տեխնոլոգիաներ» մասնագիտություններով:

ԽՆԴԻՐ 1.2. Ակտիվացնել ընդունելության մարքեթինգային գործընթացները:

Ի կատարումն ՀՊՃՀ Կապանի մասնաճյուղի Ռազմավարական ծրագրի սույն խնդրի պահանջների՝ մեծ աշխատանք է կատարվել դիմորդների մասնագիտական կողմնորոշման, ընդունելության գովազդարշավի ընդլայնման և բազմազանեցման ուղղությամբ՝ առավելագույնս ներգրավելով այդ գործընթացում մասնաճյուղի ֆակուլտետները, մասնագիտական ամբիոնները, ուսանողական խորհրդը, հիմնական գործընկեր ձեռնարկություններն ու այլ շահագրգիռ կազմակերպությունները: Աշխատանքները համակարգելու նպատակով մասնաճյուղում կազմվել էր 2014 թվականի ընդունելության գործընթացի նախապատրաստման և կազմակերպման միջոցառումների պլան և բոլոր աշխատանքներն իրականացվել են համաձայն ժամանակացույցի:

2014 թվականի ընդունելության առկա և հեռակա ուսուցման 3-ական մասնագիտությունների գծով թափուր տեղերի մրցույթին դիմորդները կարող էին մասնակցել միայն «Մաթեմատիկա» կամ միայն «Ֆիզիկա» առարկայից ստացած դրական միավորներով: Այդ հնարավորության արդյունքում 2 դիմորդ մասնաճյուղ են ընդունվել՝ հանձնելով միայն «Ֆիզիկա» առարկան:

Ընդունելության վերաբերյալ բոլոր անհրաժեշտ տեղեկատվությունը ժամանակին տեղադրվել է մասնաճյուղի կայքում: Մասնագիտական կողմնորոշմանն ուղղված միջոցառումներ են իրականացվել մարզի, առավելապես Կապանի, Քաջարանի, Մեղրիի ու Ագարակի հանրակրթական և ավագ դպրոցներում: Տպագրվել է դիմորդներին

ուղղված 380 օրինակ գովազդային բուկլետ, որոնք բաժանվել են տարածաշրջանի դպրոցներին և այլ ցանկացողներին: Ընդունելության (առկա և հեռակա ուսուցման) վերաբերյալ տեղեկատվությունը և հայտարարությունը գովազդային տեսահոլովակի տեսքով մինչև փաստաթղթերի ընդունելության ավարտը պարբերաբար հեռարձակվել են Սյունիքի մարզի ողջ տարածքով հեռարձակվող («ՍՈՍԻ») և Կապան քաղաքում հեռարձակվող («ԽՈՒՍՏՈՒՓ ԹԻՎԻ») հեռուստաալիքներով: Մասնաճյուղի ուսումնագիտական աշխատանքները պարբերաբար լուսաբանվել են նաև «Սյունաց երկիր» մարզային թերթի միջոցով:

Սահմանված կարգով կազմավորվել է մասնաճյուղի 2014թ. ընդունելության կազմակերպման և անցկացման Ընդունող Հանձնաժողով: Ինչպես առկա, այնպես էլ հեռակա ուսուցման ձևերի ընդունելության համար առանձնացվել և կահավորվել է փաստաթղթերի ընդունման համար նախատեսված սենյակ, որտեղ տեղադրվել են մասնագիտությունները լուսաբանող և գովազդող նյութեր, ընդունելության պլանային ցուցանիշները, կանոնները և դիմորդների շարժն ըստ մասնագիտությունների լուսաբանող վահանակներ: 2014 թվականի ապրիլի 8-ին մասնաճյուղում կազմակերպվել է «Բաց դռների օր», որին մասնակցել են Կապանի ու Քաջարանի հանրակրթական և ավագ դպրոցների ավարտական դասարանների սովորողները: Հանդիպմանը ներկա են եղել մասնաճյուղի ղեկավարությունը, ֆակուլտետների ղեկանները, ամբիոնների վարիչները, մասնաճյուղի 2014թ. ընդունելության կազմակերպման և անցկացման Ընդունող Հանձնաժողովի անդամները, տարածաշրջանի արդյունաբերական ձեռնարկություններում աշխատող մասնաճյուղի շրջանավարները: Ներկայացվել են մասնաճյուղի կողմից իրականացվող կրթական ծրագրերն ու մասնագիտությունները: «Բաց դռների օր»-ն իրականացված բոլոր միջոցառումները ցուցադրվել են տեղական հեռուստաալիքներով:

Շարունակվում է չլուծված մնալ մասնաճյուղի կազմում ավագ դպրոց ունենալու հարցը, որն էապես կնպաստեր մասնագիտական կողմնորոշմամբ դիմորդների հոսքի կայունացմանը:

ԽՆԴԻՐ 1.3. *Զարգացնել լրացուցիչ և շարունակական կրթության համակարգը:*

Մասնաճյուղի համար կարևոր նշանակություն ունի նաև լրացուցիչ և շարունակական կրթության ներդրումն ու զարգացումը: Հաշվետու ժամանակաշրջանում մասնագիտական աշխատաշուկայի և կրթաշուկայի առկա պահանջների ու ներքին չօգտագործված կարողությունների բացահայտման միջոցով աշխատանքներ են տարվել նաև լրացուցիչ կրթության համակարգի ձևավորման ուղղությամբ: ՀՊՃՀ գիտական խորհրդի կողմից հաստատված են լրացուցիչ կրթության ծրագրի 8 ուսումնական պլաններ (մասնագիտություններ՝ «Ճանապարհաշինարարական և բարելավման աշխատանքների տեխնիկական ապահովում», «Եռակցման աշխատանքների տեխնոլոգիա», «Համակարգիչների շահագործում», «Համակարգչային տեխնիկայի տեխնիկական և ծրագրային սպասարկում», «Հաշվապահական հաշվառում», «Օգտակար հանածոների հետախուզում և մշակում» /մասնագիտացումներ՝ «Օգտակար հանածոների հարստացում» և «Բաց հանքային աշխատանքներ»/, «Օգտակար հանածոների հարստացում»):

Պլանավորված է այս ուսումնական տարում լրացուցիչ կրթության ծրագրով դասընթացներ իրականացնել «Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ աշխատողների համար: Աշխատանքներ է իրականացվում նաև ՀՀ ԱՍՀ նախարարության աշխատակազմի Զբաղվածության պետական գործակալության կողմից կազմակերպվող մասնագիտական ուսուցման ծառայությունների մատուցման հրավերներին մասնակցելու նպատակով:

Լրացուցիչ և շարունակական կրթության արդյունավետ կազմակերպման և այդ համակարգի զարգացմանը աջակցելու հարցում առկա է նաև ՀՊՃՀ պատրաստակամությունը՝ համատեղել մասնաճյուղի և Երևանի կրթահամալիրի հնարավորությունները վերամասնագիտացման, որակավորման բարձրացման և վերապատրաստման (նոր մասնագիտությամբ) դասընթացների կազմակերպման համար, ինչպես նաև՝ անհրաժեշտության դեպքում իրականացնել դասախոսների կատարելագործման դասընթացներ:

Ամփոփելով նպատակ 1-ի 2013/2014 ուսումնական տարվա կատարողականը՝ ներկայացվում են մասնաճյուղի ընդունելության և ուսանողական համակազմի վերաբերյալ հետևյալ տեղեկատվությունները:

Քակավարի կրթական ծրագրով առկա ուսուցման ընդունելություն

Սյունիքի մարզում 2014 թվականին հանրակրթական ուսումնական հաստատություններ են ավարտել 1324 շրջանավարտներ, որը 121-ով պակաս է 2013 թվականի շրջանավարտների թվից (2013թ.-ին՝ 1445 շրջանավարտ):

Ընդհանուր առմամբ Կապանի մասնաճյուղ դիմած առկա ուսուցման 69 դիմորդներից (1-ը՝ թափուր տեղերի համար հայտարարված մրցույթի դիմորդ) ընդունվել են 59-ը (85,51%):

Մասնաճյուղի 2014 թվականի ընդունելության դիմորդների բաշխվածությունն ըստ մասնագիտությունների ներկայացված է աղյուսակ 1.1-ում:


Աղյուսակ 1.1

Մասնագիտությունը	Ընդունելության պլանային տեղերը			Դիմորդների թիվը	
	ԸՆԴ.	ԱՆՎՃ.	ՎՃ.	ԱՆՎՃ.	ՎՃ.
Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա	20	2	18	6	3
Տեղեկատվական տեխնոլոգիաներ	20	2	18	5	9
Օգտակար հանածոների հետախուզում և մշակում	20	3	17	6	3
Մետալուրգիա և նյութագիտություն	20	2	18	4	2
Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում /լեռնամետալուրգիական ճյուղում/	20	2	18	4	17
Շինարարություն, շինարարական իրերի և կառուցվածքների արտադրություն	20	3 (1)	17	6	4
ԸՆԴԱՄԵՆԸ	120	14 (1)	106	31	38

Աղյուսակ 1.2-ում բերված է 2014թ. առկա ուսուցման դիմորդների թիվն ըստ մասնագիտությունների և դիմորդների հոսքում մասնագիտությունների մասնաբաժինը վերջին 5 տարվա կտրվածքով:

Առաջին հայտով անվճար 14 (2013թ.՝ 14) տեղին հավակնում էին 31 (2013թ.՝ 28), իսկ վճարովի 106 /ԱՏ/ (2013թ.՝ 128/ԱՏ/) տեղին՝ 37 (2013թ.՝ 38) դիմորդ: Եվս մեկ դիմորդ մասնակցել է թափուր տեղերի համար հայտարարված մրցույթին:

Դասիչ	Մասնագիտությունը	2014թ. ընդունված դիմումների քանակը	Դիմորդների հոսքում մասնագիտությունների մասնաբաժինը, %				
			2014	2013	2012	2011	2010
010400	Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա	9	13,04	27,27	-	-	-
090100	Տեղեկատվական տեխնոլոգիաներ	14	20,29	16,67	25,88	28,57	15,91
130100	Օգտակար հանածոների հետախուզում և մշակում	9	13,04	10,61	8,24	14,29	21,59
150100	Մետալուրգիա և նյութագիտություն	6	8,7	15,15	15,29		15,91
080600	Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում /լեռնամետալուրգիական ճյուղում/	21	30,43	21,21	40,0	57,14	31,82
270100	Շինարարություն, շինարարական իրերի և կառուցվածքների արտադրություն	10	14,5	9,09	10,59		14,77
ԸՆԴԱՄԵՆԸ		69	100	100	100	100	100



ՀՊՃՀ Կապանի մասնաճյուղի բակալավրի կրթական ծրագրով առկա ուսուցման 2014թ. ընդունելության ամփոփիչ արդյունքներն ըստ մասնագիտությունների բերված են աղյուսակ 1.3-ում:

ՀՊՃՀ Կապանի մասնաճյուղ դիմած առկա ուսուցման 69 դիմորդներից ընդունվել են 59-ը (ընդունելության պլանը կատարվել է 49,2%-ով):

Վերջին հինգ տարիներին բակալավրի կրթական ծրագրով առկա ուսուցման ընդունելության վերաբերյալ ամփոփ տեղեկատվությունը բերված է աղյուսակ 1.4-ում:

Աղյուսակ 1.3


Մասնագիտությունը	Ընդունելության պլանային տեղերը			Ընդունված դիմորդներ			Թափուր տեղեր
	ԸՆԴ.	ԱՆՎՃ.	ՎՃ.	ԱՆՎՃ.	ՎՃ.	ԸՆԴ.	
Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա	20	2	18	2	8	10	10
Տեղեկատվական տեխնոլոգիաներ	20	2	18	3	9	12	9
Օգտակար հանածոների հետախուզում և մշակում	20	3	17	3	3	6	14
Մետալուրգիա և նյութագիտություն	20	2	18	2	1	3	17
Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում /լեռնամետալուրգիական ճյուղում/	20	2	18	2	18	20	0
Շինարարություն, շինարարական իրերի և կառուցվածքների արտադրություն	20	3 (1)	17	3	5	8	12
ԸՆԴԱՄԵՆԸ	120	14 (1)	106	15	44	59	62

* - 1 դիմորդ ընդունվել է 106 կեդրի արտոնությամբ:

Աղյուսակ 1.4

Ու. տարի	Մասն. թիվը	Դիմորդ. թիվը	Անվճար ուսուցման համակարգ			Վճարովի ուսուցման համակարգ			Ընդհանուր մրցութային ցուցանիշը
			պլ. տեղ. թիվը	փաստ. ընդուն. ուս. թիվը	Պլանի կատար. ընդ. ցուց. %	պլան. տեղ. թիվը	փաստ. ընդուն. թիվը	Պլանի կատարմ. ընդ. ցուց. %	
10/11	5	88	15	12	80	95	18	19	0,80
11/12	3	7	14	0	0	60	0	0	0,09
12/13	5	85	14	15	107,1	119	41	34,5	0,64
13/14	6	66	14	15	107,1	128	30	23,4	0,46
14/15	6	69	14	15	107,1	106	44	41,51	0,58

Բակալավրի կրթական ծրագրով առկա ուսուցման ընդունելությունը վերջին հինգ տարիների կտրվածքով



Բակալավրի կրթական ծրագրով հեռակա ուսուցման ընդունելություն

ՀՊՃՀ Կապանի մասնաճյուղի բակալավրի կրթական ծրագրով հեռակա ուսուցման 2014թ. ընդունելության պլանային 125 տեղի համար դիմել են 55 դիմորդ:

Հեռակա ուսուցման 2014 թվականի ընդունելության ամփոփիչ արդյունքներն ըստ մասնագիտությունների բերված են աղյուսակ 1.5-ում:

Աղյուսակ 1.5


Դասիչ	Մասնագիտություն	Ընդունելության պլանային տեղերը	Դիմում հայտերի թիվը	Ընդունված դիմորդների թիվը	Թափուր տեղեր
080600	Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում /լեռնամետալուրգիական ճյուղում/	30 (3)	12	12	18
090100	Տեղեկատվական տեխնոլոգիաներ	20 (2)	7	6	14
130100	Օգտակար հանածոների հետախուզում և մշակում	15 (2)	16	14	1
150100	Մետալուրգիա և նյութագիտություն	25 (2)	9	9	16
190300	Փոխադրումների և ճանապարհային երթևեկության կազմակերպում և կառավարում	20 (2)	10	8	12
270100	Շինարարություն, շինարարական իրերի և կառուցվածքների արտադրություն	15 (2)	1	0	15
ԸՆԴԱՄԵՆԸ		125 (13)	55	49	76

ՀՊՃՀ Կապանի մասնաճյուղ դիմած հեռակա ուսուցման 55 դիմորդներից ընդունվել են 49-ը (ընդունելության պլանը կատարվել է 39,2%):

Աղյուսակ 1.6-ում բերված է 2014թ. հեռակա ուսուցման դիմորդների թիվն ըստ մասնագիտությունների և դիմորդների հոսքում մասնագիտությունների մասնաբաժինը վերջին 5 տարվա կտրվածքով:

Աղյուսակ 1.6

Դասիչ	Մասնագիտությունը	2014թ. ընդունված դիմումների քանակը	Դիմորդների հոսքում մասնագիտությունների մասնաբաժինները, %				
			2014	2013	2012	2011	2010
080600	Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում /լեռնամետալուրգիական ճյուղում/	12	21,82	46,27	31,76	35,9	51,96
090100	Տեղեկատվական տեխնոլոգիաներ	7	12,73	-	-	-	-
130100	Օգտակար հանածոների հետախուզում և մշակում	16	29,09	29,85	28,24	30,77	-
150100	Մետալուրգիա և նյութագիտություն	9	16,36	10,45	21,18	20,51	48,04
190300	Փոխադրումների և ճանապարհային երթևեկության կազմակերպում և կառավարում	10	18,18	-	-	-	-
270100	Շինարարություն, շինարարական իրերի և կառուցվածքների արտադրություն	1	1,82	13,43	18,82	12,82	-
ԸՆԴԱՄԵՆԸ		55	100	100	100	100	100



Վերջին հինգ տարիներին բակալավրի կրթական ծրագրով հեռակա ուսուցման ընդունելության վերաբերյալ ամփոփ տեղեկատվությունը բերված է աղյուսակ 1.7-ում:

Աղյուսակ 1.7

Ուս. տարի	Մասնագիտ. թիվը	Դիմորդ. թիվը	Պլան. տեղ. թիվը	Փաստ. ընդուն. թիվը	Պլանի կատարմ. ընդ. ցուց. %	Ընդհանուր մրցութային ցուցանիշը
10/11	2	102	80	76	95	1,28
11/12	4	78	70	52	74,29	1,11
12/13	4	85	70	47	67,14	1,21
13/14	4	67	80	47	58,75	0,84
14/15	6	69	125	49	39,2	0,55

ՀՀ միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների բարձր առաջադիմություն ցուցաբերած շրջանավարտների՝ ՀՊՃՀ բակալավրի կրթական ծրագրով ընդունելություն

Կապանի մասնաճյուղը մեծ աշխատանք է տանում քոլեջ – բուհ կապի ստեղծման ու ամրապնդման և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների բարձր առաջադիմությամբ շրջանավարտների մասնաճյուղ անցումն ապահովելու ուղղությամբ: Նշված աշխատանքների շնորհիվ առաջին անգամ 2014 թվականին «Սյունիքի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ /«Կապի ցանցեր և հաղորդակցման համակարգեր» (դասիչ՝ 2004) մասնագիտության/ 1 շրջանավարտ բակալավրի կրթական ծրագրով ուսումը շարունակում է «Տեղեկատվական տեխնոլոգիաներ» (դասիչ՝ 090100) մասնագիտության առկա ուսուցման երկրորդ կուրսում:


Ներկայումս աշխատանքներ են տարվում քոլեջ–բուհ անցման գործընթացին առնչվող նոր պայմանագրերի կնքման ուղղությամբ. «Սյունիքի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ (3 մասնագիտություն) և «Մեղրու պետական քոլեջ» ՊՈԱԿ (1 մասնագիտություն) և «Հայաստանում Եվրոպական քոլեջ» հիմնադրամ (2 մասնագիտություն):

Մասնաճյուղի ուսանողական համակազմը

Աղյուսակ 1.8-ում բերված է մասնաճյուղի ուսանողների թվաքանակը վերջին 5 տարիների կտրվածքով (նոյեմբերի 1-ի դրությամբ)։

Աղյուսակ 1.8

Կրթական ծրագրի անվանումը	Ուսումնական տարի				
	2010/11	2011/12	2012/13	2013/14	2014/15
Բակալավր-առկա ուսուցում	314 (196)	219 (134)	179 (112)	124 (83)	135 (90)
Վճար. հաշվեկշիռը, %	62,42	61,18	62,57	66,94	66,67
Բակալավր-հեռակա ուսուցում	156 (150)	192 (185)	238 (231)	270(261)	269 (262)
Վճար. հաշվեկշիռը, %	96,15	96,35	97,05	96,67	97,4
ՄՄԿ	-	16	23 (19)	23 (19)	21(17)
Վճար. հաշվեկշիռը, %	-	-	82,61	82,61	80,95
Ընդամենը	470 (346)	427 (319)	440 (362)	417 (363)	425 (369)
Վճար. հաշվեկշիռը, %	73,62	74,71	82,27	87,05	86,82



Աղյուսակ 1.9-ում բերված է Կապանի մասնաճյուղի ուսանողական համակազմը 2013/14 ուսումնական տարում (01.11.2013թ. դրությամբ)։

Աղյուսակ 1.9

Ֆակուլտետ	Մասնագիտություն	Դասիչ	Կրթական աստիճան	Ուսուց. ձև	Ուս. թիվ	
Տ և ՃՏ	Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում /լեռնամետալուրգիական ճյուղում/	080600	ճարտարագիտության բակալավր	առկա	37	
	Օգտակար հանածոների հետախուզում և մշակում	130100	ճարտարագիտության բակալավր	առկա	17	
	Մետալուրգիա և նյութագիտություն	150100	ճարտարագիտության բակալավր	առկա	16	
	Շինարարություն, շին. իրերի և կառուցվածքների արտադրություն	270100	ճարտարագիտության բակալավր	առկա	14	
	Ընդամենը առկա					84
	Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում /լեռնամետալուրգիական ճյուղում/	080600	ճարտարագիտության բակալավր	հեռակա	106	
	Օգտակար հանածոների հետախուզում և մշակում	130100	ճարտարագիտության բակալավր	հեռակա	54	
	Մետալուրգիա և նյութագիտություն	150100	ճարտարագիտության բակալավր	հեռակա	79	
	Շինարարություն, շին. իրերի և կառուցվածքների արտադրություն	270100	ճարտարագիտության բակալավր	հեռակա	31	
	Ընդամենը հեռակա					270
Օգտակար հանածոների հարստացում	0904	կրտսեր ճարտարագետ	առկա	5		
Ընդամենը Տ և ՃՏ ֆակուլտետում					359	
ԲԳ և ՏՀ	Տեղեկատվական տեխնոլոգիաներ	090100	տեղեկատվական տեխնոլոգիաների բակալավր	առկա	27	
	Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա	010400	ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի բակալավր	առկա	13	
	Ընդամենը առկա					40
	Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում	2203	կրտսեր ճարտարագետ	առկա	18	
Ընդամենը ԲԳ և ՏՀ ֆակուլտետում					58	
ԸՆԴԱՄԵՆԸ ՄԱՍՆԱՃՅՈՒՂՈՒՄ					417	

Աղյուսակ 1.10-ում բերված է ուսանողական համակազմը 2014/15 ուսումնական տարում (01.11.2014թ. դրությամբ):

Ֆակուլտետ	Մասնագիտություն	Դասիչ	Կրթական աստիճան	Ուսուց. ձև	Ուս. թիվ	
S և ՃՏ	Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում /լեռնամետալուրգիական ճյուղում/	080600	ճարտարագիտության բակալավր	առկա	39	
	Օգտակար հանածոների հետախուզում և մշակում	130100	ճարտարագիտության բակալավր	առկա	17	
	Մետալուրգիա և նյութագիտություն	150100	ճարտարագիտության բակալավր	առկա	13	
	Շինարարություն, շին. իրերի և կառուցվածքների արտադրություն	270100	ճարտարագիտության բակալավր	առկա	17	
	Ընդամենը առկա					86
	Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում /լեռնամետալուրգիական ճյուղում/	080600	ճարտարագիտության բակալավր	հեռակա	105	
	Օգտակար հանածոների հետախուզում և մշակում	130100	ճարտարագիտության բակալավր	հեռակա	60	
	Մետալուրգիա և նյութագիտություն	150100	ճարտարագիտության բակալավր	հեռակա	70	
	Փոխադրումների և ճանապարհային երթևեկության կազմակերպում և կառավարում	190300	ճարտարագիտության բակալավր	հեռակա	8	
	Շինարարություն, շին. իրերի և կառուցվածքների արտադրություն	270100	ճարտարագիտության բակալավր	հեռակա	20	
Ընդամենը հեռակա					263	
Օգտակար հանածոների հարստացում	0904	կրտսեր ճարտարագետ	առկա	4		
Ընդամենը S և ՃՏ ֆակուլտետում					354	
ԲԳ և ՏՀ	Տեղեկատվական տեխնոլոգիաներ	090100	տեղեկատվական տեխնոլոգիաների բակալավր	առկա	33	
	Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա	010400	ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի բակալավր	առկա	16	
	Ընդամենը առկա					49
	Տեղեկատվական տեխնոլոգիաներ	090100	տեղեկատվական տեխնոլոգիաների բակալավր	հեռակա	6	
	Ընդամենը հեռակա					6
Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում	2203	կրտսեր ճարտարագետ	առկա	17		
Ընդամենը ԲԳ և ՏՀ ֆակուլտետում					74	
ԸՆԴԱՄԵՆԸ ՄԱՍՆԱՃՅՈՒՂՈՒՄ					425	

Մասնաճյուղի շրջանավարտները

Մասնաճյուղի 2013/14 ուսումնական տարվա 78 շրջանավարտներից 5-ը (առկա՝ 3, հեռակա՝ 2) ստացել են գերազանցության դիպլոմ, իսկ 5-ը (առկա՝ 2, հեռակա՝ 3) ուսումը շարունակում են մագիստրատուրայում:

Աղյուսակ 1.11-ում ներկայացված են 2013/14 ուսումնական տարվա բակալավրի կրթական ծրագրով շրջանավարտներն ըստ մասնագիտությունների, իսկ աղյուսակ 1.12-ում բերված է շրջանավարտների վերաբերյալ տեղեկատվությունը հնգամյա կտրվածքով:

Աղյուսակ 1.11

Հ/Հ	Դասիչը	Մասնագիտություն	Շրջանավարտների թիվը		Ստացել են գերազ. դիպլոմ	
			առկա	հեռակա	առկա	հեռակա
1.	090100	Տեղեկատվական տեխնոլոգիաներ	5	-	-	-
2.	080600	Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում /լեռնամետալուրգիական ճյուղում/	9	15	3	2
3.	130100	Օգտակար հանածոների հետախուզում և մշակում	9	8	-	-
4.	150100	Մետալուրգիա և նյութագիտություն	5	10	-	-
5.	270100	Շինարարություն, շին. իրերի և կառուցվածքների արտադրություն	9	8	-	-
Ընդամենը			37	41	3	2
ԸՆԴԱՄԵՆԸ ՄԱՍՆԱՃՅՈՒՂՈՒՄ			78		5	

Աղյուսակ 1.12

Կրթական ծրագիր	Ուսումնական տարի				
	2009/10	2010/11	2011/12	2012/13	2013/14
Բակալավրի կրթական ծրագիր, ընդհանուր (վճար.)	96 (63)	104 (71)	96 (63)	113 (73)	78 (65)

ՀՊՃՀ Կապանի մասնաճյուղի 2012-2016թթ. ուղղակարական պլանով նախանշված առաջընթացի գնահատման կողմնորոշիչ ցուցանիշները և նպատակ 1-ի կատարողականը

Հ/Հ	ՌԾ-ով նախանշված ցուցանիշը	2012/13 ուստարի	2013/14 ուստարի	2014/15 ուստարի
1.	Բացառապես աշխատուժի շուկայի և կրթության շուկայի պահանջմունքներով պայմանավորված ընդունելության պլանավորում (մասնագիտությունների անվանացանկ և չափաքանակներ):	ՄՄԿ ծրագրով (հիմն. կրթ. հիմքով)-2	ՄՄԿ ծրագրով (հիմն. կրթ. հիմքով)-2	ՄՄԿ ծրագրով (հիմն. կրթ. հիմքով)-2
		բակալավր առկա -5	բակալավր առկա -6	բակալավր առկա -6
		բակալավր հեռակա -4	բակալավր հեռակա -4	բակալավր հեռակա -6
2.	Հիմնական, լրացուցիչ և շարունակական կրթության ծրագրերով ընդունելության ծավալը 2016թ.-ին՝ առնվազն 200, այդ թվում.	111	92	108
	- Բակալավրի կրթական ծրագրով առկա ուսուցում- առնվազն 100,	56	45	59
	- Բակալավրի կրթական ծրագրով հեռակա ուսուցում- առնվազն 60,	47	47	49
	- 9-ամյա հանրակրթական դպրոցի հենքի վրա միջին մասնագիտական կրթական ծրագրով- առնվազն 20,	8	-	-
- լրացուցիչ և շարունակական կրթության ծրագրով- առնվազն 20:	-	-	-	
3.	Մասնաճյուղի կազմում գործող ավագ դպրոցի ստեղծում՝ 2013թ.-ին:	Չի ստեղծվել	Ստեղծման ուղղությամբ տարվել են աշխատանքներ	Ստեղծման ուղղությամբ տարվում են աշխատանքներ
4.	Տարածաշրջանի ավագ դպրոցներում գործող հենակետային դասարան՝ 1-2:	-	-	-
5.	Հիմնական, լրացուցիչ և շարունակական կրթության ծրագրերով ուսանողական համակազմը 2016թ.-ին՝ առնվազն 700, այդ թվում.	440 (01.11.2012թ. դրությամբ)	417 (01.11.2013թ. դրությամբ)	425 (01.11.2014թ. դրությամբ)
	- Բակալավրի կրթական ծրագրով առկա ուսուցում- առնվազն 400,	179	124	135
	- Բակալավրի կրթական ծրագրով հեռակա ուսուցում- առնվազն 200,	238	270	269
	- 9-ամյա հանրակրթական դպրոցի հենքի վրա միջին մասնագիտական կրթական ծրագրով- առնվազն 80,	23	23	21
- լրացուցիչ և շարունակական կրթության ծրագրով- առնվազն 20:	-	-	-	

Ն Պ Ա Տ Ա Կ 2

ՄԱՍՆԱՃՅՈՒՂՈՒՄ ԱՊԱՀՈՎԵԼ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՂ ՈՐԱԿՅԱԼ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

ԽՆԴԻՐ 2.1. Ներհամալսարանական համակարգի շրջանակներում ներդնել ուսուցման որակի գնահատման և ապահովման ներմասնաճյուղային համակարգ՝ բարձրագույն կրթության որակի ներքին արժևորման եվրոպական ENQA չափանիշների պահանջներին համապատասխան:

Հաշվետու տարում մասնաճյուղում շարունակել են ENQA (Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական ասոցիացիայի) չափանիշներին համատեղելի ՀՊՃՀ-ում ձևավորվող Որակի ներքին ապահովման համակարգի շրջանակներում ներմասնաճյուղային ուսուցման որակի գնահատման և ապահովման համակարգի ներդրման աշխատանքները: «Կրթության որակի ապահովման և վերահսկման» (ԿՈԱ և Վ) բաժնի /ներկայումս՝ «Կրթության որակի ապահովման և արտաքին կապերի» (ԿՈԱ և ԱԿ) բաժնի/ աշխատակիցները սերտորեն համագործակցում են Երևանի կրթահամալիրի և մասնաճյուղերի որակի ապահովման պատասխանատուների հետ, մասնակցում կազմակերպվող վարժանքներին, web-կոնֆերանսներին:

Մասնաճյուղի որակի կառույցների ներկայացուցիչները մասնակցել են Հայաստանի Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի (ՄԿՈԱԱԿ) և Գերմանիայի Բնական գիտությունների, ճարտարագիտության, ինֆորմատիկայի և մաթեմատիկայի որակի ապահովման կենտրոնի (ASIN) համատեղ կազմակերպած «Մասնագիտական կրթության ոլորտում որակի ապահովման միջազգայնացման և համադրելիության խթանում» թեմայով TEMPUS նախագծի դրամաշնորհային ծրագրերի ամփոփիչ համաժողովին, իսկ 2013թ. դեկտեմբերի 2-3-ին՝ «Անցումային ժամանակաշրջանի մարտահրավերները ՀՀ մասնագիտական կրթության որակի ապահովման համակարգում. վստահության ձևավորում» որակի ապահովման երկրորդ ֆորումին:

Մասնաճյուղի 6 աշխատակիցներ մասնակցել են Համաշխարհային բանկի «Կրթության որակ և համապատասխանություն» ծրագրի շրջանակներում «ՄԿՈԱԱԿ» հիմնադրամի կողմից իրականացրած «Որակի արտաքին և ներքին ապահովման համակարգերի մշակում և բարելավում» եռափուլ դասընթացներին և ստացել հավաստագիր:

ԽՆԴԻՐ 2.2. Ապահովել արդի միջազգային չափանիշներին և աշխարաշուկայի պահանջներին համահունչ ՀՊՃՀ-ում մշակվող նոր ծրագրերի ներդրումը մասնաճյուղում:

ՀՊՃՀ շրջանակներում մասնաճյուղում իրականացվում է փուլային անցում «թյունինգյան» մեթոդաբանությամբ մշակվող կրթական ծրագրերի: Հետևողական աշխատանքներ են տարվում շրջանավարտների գործնական պատրաստականության մակարդակի էական բարելավման նպատակով, մասնավորապես, արտադրական և նախաավարտական պրակտիկաների ընձեռած հնարավորությունների առավել արդյունավետ օգտագործման ուղղությամբ:

ԿՈԱ և Վ (ներկայումս՝ ԿՈԱ և ԱԿ) բաժնի կողմից պարբերաբար իրականացվում են մասնաճյուղի կրթական ծրագրերից և շրջանավարտներից գործատուների բավարարվածության ուսումնասիրություններ:

ԽՆԴԻՐ 2.3. Մասնաճյուղում ապահովել կրեդիտային համակարգի ընդլայնված կիրառությունը:

ՀՊՃՀ բակալավրական կրթական ծրագրի առկա և հեռակա ուսուցման գործող մասնագիտությունների համար ըստ կոմպետենցիաների տեսքով ձևակերպված վերջնարդյունքների ուսումնական պլանների վերակառուցման գործընթացի շրջանակներում 2013/14 ուստարուց մասնաճյուղը իրականացնում է ՀՊՃՀ-ում մշակված մոդուլային կրեդիտային հենքով ձևավորված ճկուն ուսումնական ծրագրեր՝ բարձրացնելով ուսանողների ինքնուրույն աշխատանքի դերը և ուսումնառության արդյունավետությունը:

ՀՊՃՀ-ում ներդրված կրեդիտային համակարգի անընդհատ կատարելագործման և մասնաճյուղում տարվող հետևողական աշխատանքի շնորհիվ շարունակաբար բարձրացվում է կրեդիտային համակարգի կիրառման արդյունավետությունը: Հարկ է նշել, որ մասնաճյուղի վարչական և պրոֆեսորադասախոսական կազմերը, ուսանողները միշտ ակտիվորեն մասնակցում են կրեդիտային համակարգի հետ առնչվող բոլոր նախագծերի քննարկմանը և ներկայացնում իրենց առաջարկությունները:

ԽՆԴԻՐ 2.4. Ստեղծել անհրաժեշտ պայմաններ և մեխանիզմներ՝ ուսումնառության, դասավանդման և գնահատման գործընթացների էական բարելավման համար:

Այս ուսումնական տարվա սկզբից մասնաճյուղում ներդրվեցին ՀՊՃՀ Գիտական խորհրդի 2014 թվականի սեպտեմբերի 12-ի նիստում հաստատված «Ուսանողների գիտելիքների հսկման և գնահատման ռեյթինգային համակարգի կանոնակարգ-ընթացակարգը», «Ուսանողների գիտելիքների գնահատման բողոքարկման ընթացակարգը» և «ՀՊՃՀ (Պոլիտեխնիկ) շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման ընթացակարգը»:

Մասնաճյուղում բարենպաստ պայմաններ են ստեղծվում ուսուցման ժամանակակից մեթոդների և տեխնոլոգիաների ներդրման ուղղությամբ դասախոսների նախաձեռնությունների իրականացման համար: Դասախոսների ստեղծագործական նախաձեռնությունների զարգացման, իրականացվող ուսումնամեթոդական, գիտական և դաստիարակչական աշխատանքների մակարդակի բարձրացման, մասնագիտական գործունեության մեջ առավել բարձր արդյունքներ ունեցող դասախոսների ձեռքբերումների հասարակական ճանաչման և խրախուսման, առաջավոր մանկավարժական փորձի տարածման նպատակներից ելնելով մասնաճյուղում 2013/14 ուսումնական տարում սահմանվեց և առաջին անգամ անցկացվեց «Լավագույն դասախոս» մրցույթ, որի արդյունքում լավագույն դասախոս ճանաչվեց «Ընդերքաբանության և շինարարության» ամբիոնի դասախոս Մարտիկ Գրիգորի Գալստյանը:


Դասավանդման և ուսումնառության շարունակական բարձրացման նպատակով մասնաճյուղի ԿՈԱ և Վ (ներկայումս՝ ԿՈԱ և ԱԿ) բաժինը շարունակաբար իրականացնում է շրջանավարտների կողմից կրթական ծրագրի գնահատման հարցում՝ համաձայն ՀՊՃՀ կրթական ծրագրերի որակի ապահովման ընթացակարգերի հաստատված ձևաչափի:

2013/14 ուսումնական տարում իրականացվել են «Դասավանդում–ուսումնառություն–գնահատում», «Կուրսային աշխատանքի (նախագծի) արդյունավետության գնահատում» և «Դասախոսը ուսանողի հայացքով» սոցիոլոգիական հարցումներ: Սոցիոլոգիական հարցումներ են իրականացվել նաև ավարտական կուրսերում՝ ստացած կրթությունից


ուսանողների բավարարվածության, ամփոփիչ ատեստավորման քննության և ավարտական աշխատանքների պաշտպանության որակի վերաբերյալ:

Ուսումնառության արդյունքների գնահատման որակն ու հավաստիությունը, ուսուցման կազմակերպման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով մասնաճյուղի ԿՈԱ և Վ բաժինը երկրորդ և չորրորդ կուրսերի ուսանողների շրջանում իրականացրել է մասնաճյուղում գործող կրթական ծրագրերից բավարարվածության և դասընթացի գնահատման հարցումներ: Բոլոր հարցումների արդյունքները տրամադրվել են ֆակուլտետներին և ամբիոններին՝ հետագա վերլուծությունների և եզրակացությունների համար:

Ստորև բերված են մասնաճյուղում գործող կրթական ծրագրերի գնահատման հարցման դիագրամները՝ տոկոսներով և միջինացված տվյալներով, որին մասնակցել է մասնաճյուղի 2013/14 ուստարվա 33 շրջանավարտ:



Նկ.2.1. Շրջանավարտների բավարարվածությունը կրթական ծրագրի բովանդակությունից և ուսուցման մեթոդաբանությունից %-ով




Նկ.2.2. Կրթական ծրագրերի միջին գնահատականը

Ընդհանրացված արդյունքով մասնաճյուղի կրթական ծրագրերից բավարարվածության միջին գնահատականը 5 բալանոց սանդղակով կազմել է 3,9:


Աղյուսակ 2.1-ում և նկ 2.3-2.7-ում բերված են 2012-2014թթ իրականացրած շրջանավարտների կողմից կրթական ծրագրերի գնահատման հարցումների արդյունքները (արտահայտված %-ով):

Աղյուսակ 2.1


Շրջանավարտների բավարարվածությունը կրթական ծրագրի բովանդակությունից և ուսուցման մեթոդաբանությունից	2012			2013			2014		
	Բավարարված են	Բավարարված չեն	Դժվարանում են պատասխանել	Բավարարված են	Բավարարված չեն	Դժվարանում են պատասխանել	Բավարարված են	Բավարարված չեն	Դժվարանում են պատասխանել
Տեղեկատվական տեխնոլոգիաներ	69	18	13	74	11	15	78	5	17
Օգտակար հանածոների հետախուզում և մշակում	64	21	15	77	15	8	87	4	9
Մետալուրգիա և նյութագիտություն	53	27	20	64	11	15	84	8	8
Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում	51	12	37	66	16	18	66	11	23
Շինարարություն, շինարարական իրերի և կառուցվածքների արտադրություն	78	9	13	80	7	13	95	0	5




Նկ. 2.3. «Տեղեկատվական տեխնոլոգիաներ» մասնագիտության կրթական ծրագրի գնահատումը %-ով, 2012-2014թթ.




Նկ.2.4. «Օգրակար հանածոների հետախուզում և մշակում» մասնագիտության կրթական ծրագրի գնահատումը %-ով, 2012-2014թթ.



Նկ.2.5. «Մերալուրդիա և նյութագիտություն» մասնագիտության կրթական ծրագրի գնահատումը %-ով, 2012-2014թթ.



Նկ.2.6. «Ձեռնարկությունների սնտեսագիտություն և կառավարում (լեռնամերսալուրգիայի ճյուղում)» մասնագիտության կրթական ծրագրի գնահատումը %-ով, 2012-2014թթ.



Նկ.2.7. «Շինարարություն, շինարարական իրերի և կառուցվածքների արտադրություն» մասնագիտության կրթական ծրագրի գնահատումը %-ով, 2012-2014թթ.

Կրթական ծրագրերից շրջանավարտների բավարարվածության տոկոսի աճը 2012-2014թթ պայմանավորված է նաև ՀՊՃՀ-ում կրթական ծրագրերի վերակառուցման գործընթացներով:

ԽՆԴԻՐ 2.5. Նախապատրաստվել ՄԿՈԱԱԿ-ի կողմից մասնաճյուղի կրթական ծրագրերի արտաքին փորձաքննական գնահատման և հավատարմագրման փուլային գործընթացին:

Դեռևս 2012/13 ուստարում մասնաճյուղը ՀՊՃՀ-ի կազմում մասնակցել է ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացին՝ ըստ Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի (ՄԿՈԱԱԿ) սահմանած որակի ապահովման և հավատարմագրման չափանիշների: ՀՊՃՀ ռեկտորի հրամանով ստեղծված ինքնավերլուծություն իրականացնող մասնաճյուղի աշխատանքային խումբը պատրաստել և հրապարակել է ինքնավերլուծությունը: Այն տրամադրվել է ՀՊՃՀ ինքնավերլուծությունն իրականացնող աշխատանքային խմբին, ՄԿՈԱԱԿ-ին, ինչպես նաև՝ տեղադրվել մասնաճյուղի կայքում: Ինքնավերլուծության պատրաստման աշխատանքներին ակտիվ մասնակցություն են ունեցել նաև ուսանողները:

Շարունակվում են նախապատրաստական աշխատանքները ՀՊՃՀ կրթական ծրագրերի արտաքին փորձաքննական գնահատման և հավատարմագրման փուլային գործընթացներում մասնաճյուղի մասնակցության ուղղությամբ:

Տեղեկատվություն 2013/14 ուսումնական տարում մասնաճյուղում ուսուցման գործընթացի կազմակերպման վերաբերյալ

Ուսումնական գործընթացի հսկողությունը (01.10.2014թ. դրությամբ)

Աղյուսակ 2.2

Գործընթաց, ուսանողների թիվը							
Հեռացում	Ազատում	Ուսումն. դադար.	Վերականգնում	Այլ հաստ. տեղափ.	Մասնագ. փոփոխ.	Ուս. ձևի փոփոխ.	Ուսումնառության շարունակում
14 (8)	5 (1)	39 (24)	6 (6)	4 (4)	4	7	27+1* (26)

*ուսումնառության շարունակում քոլեջից:
Փակագծում նշված են նախորդ տարվա տվյալները:

Պրակտիկաների կազմակերպումը

Հաշվետու տարում նախաավարտական և արտադրական պրակտիկաներ են կազմակերպվել 3 կազմակերպություններում (աղյուսակ 2.3):

Աղյուսակ 2.3

Դասիչը	Մասնագիտությունը	Սովորող. թիվը	Պրակտիկայի պայմանագրերի ցանկը
080600	Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում /լեռնամետալուրգիական ճյուղում/	17	«Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ
		8	«ԴԱՆԴԻ ՓՐԻՇՍ ՄԵԹԱԼՍ ԿԱՊԱՆ» ՓԲԸ
090100	Տեղեկատվական տեխնոլոգիաներ	2	«Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ
130100	Օգտակար հանածոների հետախուզում և մշակում	8	«Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ
		8	«ԴԱՆԴԻ ՓՐԻՇՍ ՄԵԹԱԼՍ ԿԱՊԱՆ» ՓԲԸ
150100	Մետալուրգիա և նյութագիտություն	15	«Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ
270100	Շինարարություն, շինարարական իրերի և կառուցվածքների արտադրություն	16	«Արքիթեքթոնիք» ՍՊԸ
0904	Օգտակար հանածոների հարստացում	5	«Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ

«Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» մասնագիտության (դասիչ՝ 2203) պրակտիկան կազմակերպվել է մասնաճյուղում:

Առաջադիմության ցուցանիշներն ըստ ուսումնական կիսամյակների

Մասնաճյուղի առաջադիմությունը 1-ին կիսամյակում կազմել է 74.73%, 2-րդ կիսամյակում՝ 73.99%, իսկ միջին տարեկան առաջադիմությունը կազմել է 74.38%: Ստորև բերված են մասնաճյուղի առաջադիմությունն ըստ կիսամյակների և կուրսերի՝ բակալավրի (առկա և հեռակա), միջին մասնագիտական (առկա) կրթական ծրագրերի համար (աղյուսակ 2.4 – 2.6):

Աղյուսակ 2.4

Բակալավրի կրթական ծրագիր, առկա ուսուցում

Կուրս	Պետպատվեր %		Վճարովի %		Ընդհանուր %	
	I	II	I	II	I	II
I	100	86.67	100	90.00	100	88.57
II	100	92.86	88.46	85.19	92.50	87.80
III	-	-	-	-	-	-
IV	100	100	63.64	95.65	76.47	97.14
Ընդամենը	100	92.86	84.72	90.00	90.27	90.99

Աղյուսակ 2.5

Բակալավրի կրթական ծրագիր, հեռակա ուսուցում

Կուրս	Պետպատվեր %		Վճարովի %		Ընդհանուր %	
	I	II	I	II	I	II
I	100	100	81.58	60.53	82.05	61.54
II	0.00	0.00	79.19	68.63	77.55	67.31
III	100	100	57.53	59.42	58.67	60.56
IV	0.00	66.67	47.83	72.34	44.90	72.00
V	100	-	85.71	-	86.05	-
Ընդամենը	50.00	71.43	68.42	64.88	67.84	65.09

Աղյուսակ 2.6

Միջին մասնագիտական կրթական ծրագիր, առկա ուսուցում

Կուրս	Պետպատվեր %		Վճարովի %		Ընդհանուր %	
	I	II	I	II	I	II
I	100	100	100	100	100	100
II	100	100	100	100	100	100
Ընդամենը	100	100	100	100	100	100

Գերազանց սովորող ուսանողների թվաքանակն ըստ մասնագիտությունների

Աղյուսակ 2.7

Մասնագիտություն	Դասիչ	Գերազանց սովորող ուսանողների թիվը	
		առկա	հեռակա
Տեղեկատվական տեխնոլոգիաներ	090100	0	-
Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա /	010400	1	-
Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում /լճճ/	080600	6	1
Շինարարություն, շին. իրերի և կառուցվածքների արտադրություն	270100	4	0
Օգտակար հանածոների հետախուզում և մշակում	130100	0	0
Մետալուրգիա և նյութագիտություն	150100	0	0
Ընդամենը		11	1

Ամփոփիչ արեստավորման քննությունների, ավարտական աշխատանքների պաշտպանության արդյունքներն ըստ մասնագիտությունների (բակալավրի կրթական ծրագիր) (2013/14 ուս տարի)

Հ/Հ	Մասնագիտության դասիչը	Մասնագիտություն	Ամփոփիչ արեստավորման քննություն						Ստացել են գերազանցության դիպլոմ	ԸՆԴՎԱՄԵՆԸ	Պաշտպանել են ավարտական աշխատանք				Նախորդ տարիների շրջանավարտներից թույլատրվել է մասնակցելու ավարտական աշխատանքի պաշտպանությանը		Ավարտել են Բուրդ - ստացել են դիպլոմ (Ս7+22)
			ԱԱՔ մասն ուս. թիվ	Գնահատված ուսանողների թիվը / %				Միջ. գնահ.			Դրանցից ստացել են գնահատականներ				ԸՆԴՎԱՄԵՆԸ	Դրանցից դրական գնահատականներ են ստացել	
				«5»	«4»	«3»	«2»				«5»	«4»	«3»	«2»			
1.	090100	Տեղեկատվական տեխնոլոգիաներ	5	-	4	1		3.80	-	5	-	5	-	-	-	-	5
2.	080600	Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում /լմճ/	9	5	-	4	-	4.11	3	9	5	4	-	-	0	0	9
3.	130100	Օգտակար հանածոների հետ. և մշակում	9	-	2	7	-	3.22	-	8	1	3	4	-	-	-	9
4.	150100	Մետալուրգիա և նյութագիտություն	5	-	2	3	0	3.40	-	5	-	3	2				5
5.	270100	Շինարարություն, շին. իրերի և կառ. արտ.	8	3	3	2	0	4.13	-	9	3	3	3	-	1	1	9
6.	080600	Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում /լմճ/ (հեռակա)	15	4	5	6	-	3.87	2	15	6	9	-				15
7.	270100	Շինարարություն, շին. իրերի և կառ. արտ. (հեռակա)	8	-	4	4		3.50		8		5	3				8
8.	130100	Օգտակար հանածոների հետ. և մշակում (հեռակա)	8	-	-	8		3.00		8	2	4	2				8
9.	150100	Մետալուրգիա և նյութագիտություն (հեռակա)	10	-	3	7	-	3.30		10	2	5	3				10
ԸՆԴԱՄԵՆԸ			77	12/15.58	23/29.87	42/54.55	-	3.61	5	77	19/24.67	41/53.25	17/22.08	0	1	1	78

ՀՊՃՀ Կապանի մասնաճյուղի 2012-2016թթ. ռազմավարական պլանով նախանշված առաջընթացի գնահատման կողմնորոշիչ ցուցանիշները և նպատակ 2-ի կատարողականը

Հ/Հ	ՌԾ-ով նախանշված ցուցանիշը	2012/13 ուս.տարի	2013/14 ուս.տարի	2014/15 ուս.տարի (01.11.2014թ.)
1.	Մասնաճյուղում ուսուցման որակի գնահատման և ապահովման գործող ներքին համակարգ՝ համահունչ եվրոպական արժևորման չափանիշների պահանջներին – 2012թ.:	Եղել է ձևավորման փուլում	Եղել է ձևավորման փուլում	Ձևավորման փուլում է
2.	Մասնաճյուղում իրականացվող բակալավրական կրթական ծրագրերի վերլուծության և որակի ամենամյա գնահատման պրակտիկայի արմատավորում՝ սկսած 2012/13 ուստարվանից:	Իրականացվել են նախապատրաստական աշխատանքներ	Իրականացվել են նախապատրաստական աշխատանքներ	Իրականացվում են նախապատրաստական աշխատանքներ
3.	Առաջարկվող մասնագիտությունների վերանայված ցանկ՝ համապատասխանեցված աշխատաշուկայի առկա պահանջների՝ 2013/2014 ուստարի:	Կազմվել է մասնաճյուղի 2012-2016թթ. ընդունելության կողմնորոշիչ հեռանկարային ցանկ	Առկա է	Պետք է վերանայվի՝ ըստ ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտությունների և որակավորումների նոր ցանկի
4.	Շուկայի պահանջունքներով ձևավորված նոր մասնագիտություններ և մասնագիտացումներ՝ առնվազն 1-հնգամյա կտրվածքով:	Աշխատանքներ է տարվել 1 նոր մասնագիտությամբ ուսուցում կազմակերպելու ուղղությամբ:	1 նոր մասնագիտություն, աշխատանքներ են տարվել հեռակա ուսուցման 2 նոր մասնագիտություններով ուսուցում կազմակերպելու ուղղությամբ:	2 նոր մասնագիտություն հեռակա ուսուցմամբ
5.	Փուլային անցում կրթական ծրագրերի մշակման և ներկայացման նոր՝ բանիմացության ձևավորմանն ուղղված եվրոպական կառուցվածքի՝ սկսած 2012/2013 ուստարվանից:	-	Ներդրվել է	Նախապատրաստվում է իրականացնել 2-րդ փուլը
6.	Մասնաճյուղի շրջանավարտներից և կրթական ծրագրերից գործատուների բավարարվածության պարբերական ուսումնասիրություններ՝ սկսած 2012/2013 ուստարվանից՝ առնվազն 2 անգամ յուրաքանչյուր մասնագիտության համար (հնգամյա կտրվածքով):	Կատարվել է	Կատարվել է	Նախատեսվում է ուստարվա ընթացքում
7.	Վերանայված և մեթոդական ու կազմակերպական առումներով կատարելագործված կրեդիտային համակարգ. ներդրման ավարտը՝ 2012/13 ուստարի:	Իրականացվել է	Իրականացվել է	Իրականացվում է
8.	Մասնաճյուղի դասախոսական կազմի մանկավարժական գործունեության ամենամյա գնահատման գործող ներքին համակարգ՝ սկսած 2012/2013 ուստարվանից:	-	ՀՊՃՀ-ում մշակման փուլում է	ՀՊՃՀ-ում ավարտվել են մշակման ուղղությամբ կատարվող աշխատանքները
9.	Ուսումնառությունից մասնաճյուղի ուսանողների բավարարվածության ամենամյա պարտադիր գնահատման համակարգ՝ սկսած 2012/2013 ուստարվանից:	Կատարվել է	Կատարվել է	Նախատեսվում է ուստարվա ընթացքում
10.	Մասնաճյուղի գործունեության և կրթական ծրագրերի ինքնավերլուծություն՝ ըստ ՄԿՈՒԱԿ-ի սահմանած որակի ապահովման և հավատարմագրման չափանիշների՝ 2012-2013 թթ.:	ՀՊՃՀ-ի հետ մասնաճյուղը մասնակցել է ենթակառուցվածքային հավատարմագրման համար իրականացված ինքնավերլուծությանը	Նախապատրաստական աշխատանքներ են տարվել կրթական ծրագրերի ինքնավերլուծության գործընթացի ուղղությամբ	Շարունակվում են նախապատրաստական աշխատանքները
11.	Մասնաճյուղի կրթական ծրագրերի (մասնագիտությունների) պետական հավատարմագրում. գործընթացի ավարտը՝ 2015 թ.:	Նախապատրաստական փուլում էր	Նախապատրաստական փուլում էր	Նախապատրաստական փուլում է

ԱՊԱՀՈՎԵԼ ԱՐԴԻ ԿՐԹԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ԲԱՎԱՐԱՐՈՂ ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄ, ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՕՊՏԻՄԱԼ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՀԱՄԱԿԱՐԳ

ԽՆԴԻՐ 3.1. Շարունակել բարելավել և համալրել դասախոսական կազմը՝ արդի կրթական պահանջներին համապատասխան:

Մասնաճյուղի պրոֆեսորադասախոսական առկա ներուժի ամփոփ նկարագիրը հետևյալն է. հիմնական կազմում գիտական աստիճան ունեն 34,29%-ը, իսկ լրիվ կազմում՝ 30,23%-ը: Աստիճանակիր 13 դասախոսներից 1-ը գիտությունների դոկտոր, պրոֆեսոր է; 9-ը՝ գիտությունների թեկնածու, դոցենտ; 3-ը՝ գիտությունների թեկնածու: Հիմնական դասախոսական կազմում ընգրկված է 35, իսկ լրիվ դասախոսական կազմում՝ 43 դասախոս: Մասնաճյուղի դասախոսական հիմնական կազմի միջին տարիքը կազմում է 45 տարի:

Պրոֆեսորադասախոսական կազմի ընդհանրական բնութագրի ձևավորման և արդի կրթական բարեփոխումների պահանջներին համապատասխանության ուսումնասիրման նպատակով 2013 թվականի հոկտեմբեր ամսին իրականացվել է դասախոսական առկա ներուժի գնահատում (հաշվառում): Վերլուծության արդյունքում արձանագրվել է , որ

- թեև աստիճանակիր դասախոսների հաշվեկշիռը չի գերազանցում 50%-ը, սակայն դասախոսական կազմի զգալի մասը երկարամյա և փորձառու դասախոսներ են,
- առկա դասախոսական ներուժը բավարարում է մասնաճյուղում ներկայումս ուսուցանվող մասնագիտություններով (մասնագիտացումներով) դասավանդման անհրաժեշտ որակի ապահովման համար, իսկ նոր մասնագիտություններով ուսուցման սկզբնական փուլում մասնաճյուղին կաջակցի Երևանի կրթահամալիրը:

Միևնույն ժամանակ անհրաժեշտ է լուրջ ուշադրություն դարձնել գիտական կադրերի (հատկապես՝ երիտասարդ) պատրաստման գործընթացին, հնարավորյան սահմաններում բարելավել հաստիքի օգտագործման գործակցի ցուցանիշը, ինչպես նաև՝ ձեռնարկել միջոցառումներ վերապատրաստման և որակավորման բարձրացման դասընթացներին դասախոսների մասնակցության ուղղությամբ:

Մասնաճյուղում մշտապես ուշադրություն է դարձվում արդի կրթական պահանջներին համապատասխան դասախոսական կազմի ապահովման խնդրին: Դասախոսների մասնագիտական առաջընթացի նպատակով ներկայումս ակտիվորեն օգտագործվում է գիտական հայցորդների ինստիտուտը: Պրոֆեսորադասախոսական կազմի շարունակական բարելավման կարևոր բաղադրիչներից է նաև դասախոսների վերապատրաստման և որակավորման բարձրացման պարբերական գործընթացների կազմակերպումը: Գիտատեխնիկական առաջընթացի և աշխատաշուկայի պահանջների բավարարմանն են միտված գործող կրթական ծրագրերի փոփոխությունները, որն էլ իր հերթին ենթադրում է դասախոսների կատարելագործմանն ուղղված մի շարք միջոցառումների իրականացում: Այդ նպատակով դեռևս 2012/13 ուսումնական տարում մասնաճյուղը ներկայացրել էր հայտ ՀՊՃՀ-ում կազմակերպվող Ն. Բաումանի անվան Մոսկվայի պետական տեխնիկական համալսարանի դասախոսների կողմից վարվող որակավորման բարձրացման դասընթացներին դասախոսների մասնակցության համար: Հեռավար ուսուցման դասընթացներն առավել մատչելի դարձնելու համար նպատակահարմար է օգտագործել մասնաճյուղում առկա հեռատեսակապի արդիական միջոցները:

2014թ. փետրվարին ՀՊՃՀ Գիտական խորհրդի որոշմամբ հաստատված պրոֆեսորադասախոսական կազմի գործունեության վարկանիշային գնահատման կարգի կիրարկումը թույլ կտա որոշակի ժամանակահատվածի համար համակողմանի գնահատել մասնաճյուղի դասախոսների գիտամանկավարժական գործունեությունը, ստացված արդյունքները հաշվի առնել դասախոսի մրցության ընտրության, պաշտոնեական առաջընթացի և նյութական ու բարոյական խրախուսման միջոցների կիրառման դեպքերում, ինչպես նաև՝ համեմատական վերլուծության հիման վրա ստանալ տվյալներ դասախոսական կազմով մասնաճյուղի ուսումնական ստորաբաժանումների ապահովվածության որակական ցուցանիշների վերաբերյալ:

Մասնաճյուղում մեծ ուշադրություն է դարձվում դասավանդման արդյունավետության շարունակական բարձրացման, դասախոսների մասնագիտական ունակությունների և մանկավարժական հմտությունների կատարելագործման ուղղությամբ տարվող աշխատանքներին:

ԽՆԴԻՐ 3.2. Ապահովել հաստիքների օպտիմալ օգտագործում և վարչակազմի շարունակական համալրում ու որակական առաջընթաց:

Շարունակական բնույթ են կրում դասախոսական, վարչական, ուսումնաօժանդակ և սպասարկող կազմի քանակական ու որակական ցուցանիշների բարելավման, մասնաճյուղի կառավարման գործընթացում դասախոսների մասնակցության ապահովման, ինչպես նաև՝ մասնաճյուղի կառավարման համակարգի որակյալ և կայուն ռեզերվի ստեղծման ու կոլեկտիվ պատասխանատվության արմատավորման ուղղություններով իրականացվող աշխատանքները:

Մասնաճյուղում ուսումնական բեռնվածքների հաշվառումը և պաշտոնացանկի ձևավորումն իրականացվում է էլեկտրոնային համակարգի կիրառմամբ, որի շնորհիվ ավելի դյուրին է դարձել պրոֆեսորադասախոսական կազմի հաստիքացուցակների ձևավորման գործընթացի ուղղությամբ տարվող աշխատանքները:

2013/14 ուստարում 8-ով նվազել էր պրոֆեսորադասախոսական հաստիքների թիվը՝ պայմանավորված միջին մասնագիտական կրթական ծրագրով ընդունելության դադարեցման, բակալավրի կրթական ծրագրով առկա ուսուցման 3-րդ կուրսի բացակայության, ուսումնական բեռնվածքների հաշվարկման քանակական և ժամային նոր նորմերին անցնելու, ինչպես նաև՝ 1 պայմանական հաստիքի միջին բեռնվածության աճի (856 ժամ) հանգամանքներով: Դասախոսական կազմի միջին տարիքը հաշվետու տարում կազմել է 45,9 (2012/13 ուստարում՝ 47,8): 5917,7 ժամով բեռնվածքի նվազման հետևանքով նվազել է նաև հիմնական պրոֆեսորադասախոսական կազմի ՀՕԳ-ը (հաստիքի օգտագործման գործակից) 2012/13 ուստարվա 0,94-ի փոխարեն դառնալով 0,7:

Մասնաճյուղի ժամաքանակների վերաբերյալ տվյալները բերված են աղյուսակներ 3.1-ում և 3.2.-ում, իսկ պրոֆեսորադասախոսական կազմի վերաբերյալ վիճակագրական տվյալները՝ աղյուսակներ 3.3.-3.6-ում:

Աղյուսակ 3.1

Տարեկան ուսումնական բեռնվածքի ծավալն ըստ կրթական ծրագրերի

Ուս.տարի	Միջին մասնագիտական	Բակալավր	Ընդամենը
2011/12	1565,1	24045,9	25611
2012/13	4427,9	30200,8	34628,7
2013/14	2991,5	25719,5	28711
2014/15	2853,9	22158,9	25012,8

Տարեկան ուսումնական բեռնվածքի ծավալն ըստ ուսումնական գործընթացի բաղադրիչների

	Դասախոսություն	Փորձնական պարապմունք	Լաբորատոր պարապմունք	Կոնսուլտացիաներ	Հարցումներ և մոդրվներ, ստուգաթղթեր	Քննություններ	Պրակտիկաներ			Հաշվեգրաֆիկական աշխատանք (ռեֆերատ)	ՀՈւ. ստուգողական աշխատանքներ	Կուրսային նախագիծ (աշխատանք)	Ավարտական աշխատանքի ղեկավարում	Ամերիկյան քննական հանձնաժողով	Պետական քննական հանձնաժողով	Ամբիոնի վարիչի դասախոսումներ	Փրախտում	ԸՆԴԱՄԵՆԸ
							Ուսումնական	Արտարական	Նախաավարտական									
2011/12	6747	3846	2676	1070	741	2608	0	260	195	769		2248	3299	224	253	250	426	25611
2012/13	7446	6375	2682	1797,3	1695,5	3206	220	290	375	741,5	1310,9	2777	3828	252	1002,5	250	380	34628,7
2013/14	6904	5829	2584	2238	912,8	2112	330	150	525	263,1	933,6	1900	2900	197,5	395	300	237	28711
2014/15	7073	5406	2783	1453	761	2048,1	290	290	290	178,6	866,1	1899	1555	-	-	120	-	25012,8

Մասնաճյուղի պրոֆեսորադասախոսական կազմի պայմանական հաստիքների թիվը

2011/12	2012/13	2013/14	2014/15
28+0,5 (ժվճ)	40+1,5 (ժվճ)	32,92+0,54 (ժվճ)	28,62+0,32 (ժվճ)
28,5	41,5	33,45	28,94




Մասնաճյուղի պրոֆեսորադասախոսական կազմի պայմանական հաստիքների բաշխումն ըստ փարակարգերի և ձևակերպման ձևի (հաստիք/անձ)

	2013/14 (01.09.2013թ. դրությամբ)				2014/15 (01.09.2014թ. դրությամբ)			
	ԱՊ	ՆՀ	ԱՀ	Ընդ.	ԱՊ	ՆՀ	ԱՀ	Ընդ.
Պրոֆեսոր	-	0,5/1	0,6/2	1,1/3	-	0,59/1	-	0,59/1
Դոցենտ	3,67/3	2,19/5	0,54/1	6,4/9	4,51/4	2,12/4	0,25/1	6,88/9
Ավագ դասախոս	1,1/1	-	-	1,1/1	1,22/1	-	-	1,22/1
Ասիստենտ	0,93/1	1,05/2	2,11/3	4,09/6	0,93/2	0,8/1	1,22/2	2,95/5
Դասախոս	13,55/16	4,42/10	2,26/5	20,23/31	12,19/17	2,81/5	1,98/5	16,98/27
Ընդամենը	19,25/21	8,16/18	5,51/11	32,92/50	18,85/24	6,32/11	3,45/8	28,62/43

*Պրոֆեսորադասախոսական կազմը (բացառությամբ 1 դասախոսի) ձևակերպված է աշխատանքային պայմանագրով (առանց մրցույթի):


Մասնաճյուղի հիմնական պրոֆեսորադասախոսական կազմի պայմանական հաստիքների օգտագործման գործակիցը և միջին փարիքը

Ամբիոն	2013/14 (01.09.2013թ. դրությամբ)		2014/15 (01.09.2014թ. դրությամբ)	
	ՀՕԳ	Միջին տարիք	ՀՕԳ	Միջին տարիք
Մ և ԲԱ	0,62	47,5	0,58	46
ՀԱ և Մ	0,61	30	0,65	35
SS Ի և ԱՀ	0,62	49,25	0,73	47
Ը և Շ	0,69	55,71	0,84	47,5
Մ և Ն	0,88	54,4	0,74	51,8
«ՃՏ և Կ-1» ամբիոնի Կապանի մասնաճյուղ	0,98	27,5	-	-
«ՃՏ և Կ» ամբիոն	-	-	0,91	28
Ըստ մասնաճյուղի	0,7	45,9	0,72	45



Գիտական աստիճան ունեցողների հաշվեկշիռը, %

Ամբիոնի անվանումը	2013/14 (01.10.2013թ. դրությամբ)		2014/15 (01.09.2014թ. դրությամբ)	
	հիմնական կազմում	լրիվ կազմում	հիմնական կազմում	լրիվ կազմում
Մ և ԲԱ	60	54,55	66,67	60
ՀԱ և Մ	-	-	-	-
SS Ի և ԱՀ	14,29	25	12,5	12,5
Ը և Շ	28,6	27,27	33,33	33,33
Մ և Ն	40	50	50	50
«ՃՏ և Կ-1» ամբիոնի Կապանի մասնաճյուղ	-	16,67	-	-
«ՃՏ և Կ» ամբիոն	-	-	-	-
Ընդամենը	28,95	30,61	34,29	30,23



2014/15 ուսումնական տարում ուսումնական պլանների խմբագրման, 1-ին կուրսի նոր ուսումնական պլանների ներդրման, բակալավրի կրթական ծրագրով առկա ուսուցման 4-րդ կուրսի բացակայության, ուսումնական բեռնվածքների հաշվարկման քանակական և ժամային նորմերի փոփոխման, ինչպես նաև ամփոփիչ ատեստավորման քննության վերացման հանգամանքներով պայմանավորված 4,5-ով նվազել է պրոֆեսորադասախոսական կազմի հաստիքների թիվը: Դասախոսական կազմի թիվը նվազեցվել է հիմնականում համատեղությամբ աշխատող դասախոսների հաշվին: Ներկայումս 1 պայմանական հաստիքի միջին բեռնվածությունը կազմում է 864 ժամ:

Հիմնական պրոֆեսորադասախոսական կազմում մեծ է կանանց հաշվեկշիռը (60%):

3. Ինտերնետ կապի թողունակությունը հասցնել մինչև 12 Մբ/վ:
4. Շարունակել համագործակցությունը «Քրոնիմետ» բարեգործական հիմնադրամի և «Ձեռնարկությունների Ինկուբատոր» հիմնադրամի հետ Mobile լուծումների լաբորատորիայի հետագա ընդլայնման և տեղեկատվական ռեսուրսներով համալրման ուղղությամբ:
5. Ընդլայնել համագործակցության շրջանակները ՀՊՃՀ Շարունակական կրթության կենտրոնի հետ:

ՀՊՃՀ Կապանի մասնաճյուղի 2012-2016թթ. ռազմավարական պլանով նախանշված առաջընթացի գնահատման կողմնորոշիչ ցուցանիշները և նպատակ 6-ի կատարողականը

Հ/Հ	ՌԾ-ով նախանշված ցուցանիշը	2012/13 ուսումնական տարի	2013/14 ուսումնական տարի	2014/15 ուսումնական տարի (01.11.2014թ)
1.	Ունենալ առնվազն 8 տեխնոլոգիական կարողությամբ և 2 հեռուստուցման լսարաններ:	4	4	4
2.	Հեռուստուցման գործող ինֆրակառուցվածք:	-	-	-
3.	Էլեկտրոնային ռեսուրսների օգտագործմամբ դասընթացների հաշվեկշիռը՝ առնվազն 45-50%:	43,6%	44,3%	45,7%
4.	Էլեկտրոնային տեխնոլոգիաների կիրառում դասախոսների առնվազն կեսի կողմից:	58,3%	61,2%	63,6%
5.	Մասնաճյուղի տեղեկատվական ռեսուրսների և նոր տեխնոլոգիաների ներդրման պլանավորման և զարգացման խորհուրդ:	Մշակվել և հաստատվել է խորհրդի կանոնակարգը	Ստեղծվել է խորհուրդը	Խորհուրդ բնականոն գործում է
6.	Անդամակցություն տեղեկատվական ռեսուրսների համալսարանական պորտալին:	Առկա էր	Առկա էր	Առկա է
7.	Մասնաշենքերում գործող անլար ինտերնետային կապ:	Wi-Fi ծածկույթ մասնաշենքերի տարածքում	Wi-Fi ծածկույթ մասնաշենքերի տարածքում	Wi-Fi ծածկույթ մասնաշենքերի տարածքում
8.	Ուսանողների տարեկան միջին թվի և ուսումնական գործընթացում ներգրավված քոմիյությունների հարաբերակցությունը՝ ոչ ավելի քան 7:	2012թ. - 10,3	2013թ. - 7,5	2014թ. - 7,1
9.	ՀՊՃՀ-ի առաջատար տեղեկատվական տեխնոլոգիաների ուսումնակրթական և հետազոտական ազգային ռեսուրսային կենտրոնի տարածաշրջանային մասնաճյուղ:	-	Տարվել են համապատասխան աշխատանքներ	Աշխատանքներն ընթացքի մեջ են

ԶԱՐԳԱՑՆԵԼ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳԻՏԱԿԱՆ ՆԵՐՈՒԺԸ ԵՎ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ-ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԱՊԵՐԸ, ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ՏԱՆԵԼ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԵԼՈՒ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ

ԽՆԴԻՐ 7.1. Ապահովել մասնաճյուղի գիտական ներուժի ու նյութատեխնիկական բազայի զարգացումը և գիտահետազոտական աշխատանքներում դասախոսական կազմի ներգրավվածության ընդլայնումը:

Հաշվետու ժամանակաշրջանում տարվել են որոշակի աշխատանքներ 2012 /2013 ուսումնական տարում մշակված մասնաճյուղի գիտական ներուժի զարգացման հեռանկարային հնգամյա պլանի և մասնաճյուղի գիտական հենքի զարգացման փուլային ծրագրի իրականացման ուղղությամբ:

Մասնաճյուղում ընթացքի մեջ են տեղեկատվական տեխնոլոգիաների և լեռնամետալուրգիական ուղղվածության լաբորատորիաների շահագործման աշխատանքները, որոնք էականորեն կնպաստեն գիտական ներուժի և գիտական հենքի զարգացմանը:

Շարունակաբար աշխատանքներ են տարվում նաև գիտական հետազոտությունների համար բավարար տեղեկատվական հենքի ապահովման ուղղությամբ, որը ներկայումս ներառում է հետևյալը.

- Wi-Fi կապով ապահովվածություն (ինտերնետային կապի թողունակությունը կազմում 8 Մբ/վրկ),
- զուտ գիտական հետազոտությունների համար հատկացված է 12 քումփյութեր, որոնցից 8-ը տեղաբաշխված են ամբիոններում, իսկ 4-ը՝ տնտայամանագրային աշխատանքների կատարման համար հատկացված սենյակում: 2013 թվականին 01-Գ/2010 տնտայամանագրային նախագծի միջոցներով ձեռք է բերվել 2 քումփյութեր և 1 պլանշետ,
- իրականացվող գիտական ծրագրերում տեղեկատվական տեխնոլոգիաները օգտագործվում են հետևյալ ոլորտներում.
 1. տվյալների վիճակագրական մշակման, մաթեմատիկական մոդելավորման և օպտիմալ կառավարման ծրագրային միջոցների կիրառում (SPSS, LabVIEW, GPSS, TORA MAPLE, AnyLogic և այլն),
 2. գրաֆիկական մոդելավորման և ավտոմատացված նախագծման ծրագրային միջոցների կիրառում (Mathcad, ArchiCad, AutoCad և այլն):
 3. Ինտերնետային ռեսուրսների կիրառում, ներառյալ.
 - գիտական էլեկտրոնային գրականության և պարբերականների ուսումնասիրում,
 - վիրտուալ (on-line) ուսումնագիտական լաբորատորիաների և ծրագրային միջոցների օգտագործում,
 - on-line թարգմանիչների և խմբագրիչների օգտագործում,
 - գիտական պարբերականներում հոդվածների հրատարակում,
 - մասնակցություն ինտերնետային մասնագիտական ֆորումներին:
- ՀՊՃՀ աջակցությամբ մասնաճյուղը օգտվում է eLibrary համակարգից,
- աշխատակիցները հնարավորություն ունեն օգտվելու մի շարք տպագիր տեղեկատվական աղբյուրներից. «ՀՊՃՀ Բանբեր», «Լրաբեր» (Գիտական հոդվածների ժողովածու, ՀՊՃՀ), ՀՊՃՀ-ի և ՀՀ ԳԱԱ-ի կողմից համատեղ

տպագրվող ՀՀ ԳԱԱ և ՀՊՃՀ տեղեկագրի «Տեխնիկական գիտություններ» սերիա, «Մաթեմատիկական բարձրագույն դպրոցում» գիտական և մեթոդական հոդվածների ժողովածու, «Գիտության աշխարհում», «Բնագետ», «Հանքագործ և մետալուրգ» «Физика в школе», «Квант», «Կրթությունը և գիտությունը Արցախում», «Մաթեմատիկական դպրոցում» ինչպես նաև՝ գիտահետազոտական աշխատանքներում ընդգրկված աշխատակիցները մասնակցում են ՀՊՃՀ-ի և այլ գիտաժողովների:

Հաշվի առնելով աջակցելու ՀՊՃՀ պատրաստականությունը, անհրաժեշտության դեպքում մասնաճյուղը կարող է օգտվել նաև Հայկական վիրտուալ գիտական գրադարանից, Springer և EBSCO համաաշխարհային գիտական անգլալեզու շտեմարաններից, ՀՊՃՀ-ի հետ համագործակցող գիտական կազմակերպությունների քոմփյուտերային կլաստերներից:

Գիտական ներուժի զարգացման համար երիտասարդ գիտական կադրերի ներգրավման կարևորագույն նախադրյալը դասախոսական կազմի աշխատավարձերի շարունակական բարձրացումն է: Դեռևս համապատասխան ֆինանսական ռեսուրսների բացակայությունը թույլ չի տալիս մշակել և ներդնել մեխանիզմներ երիտասարդ գիտական կադրերի ներգրավման, ինչպես նաև՝ գիտահետազոտական աշխատանքներում ներգրավված դասախոսների և երիտասարդ գիտական կադրեր պատրաստող գիտական ղեկավարների խրախուսման համար:

Համատեղ գիտահետազոտական աշխատանքների իրականացումը մասնաճյուղի տարբեր պրոֆիլների գիտական ներուժի ներգրավմամբ անշուշտ խրախուսելի է: Սակայն այդ ներուժի համեստ հնարավորությունները դեռևս հնարավորություն չեն ընձեռում մրցույթային հիմունքներով լրացուցիչ ֆինանսավորվող գիտական նախագծեր կատարել, իսկ արտադրական ձեռնարկությունները առանձնապես շահագրգռված չեն մասնաճյուղին նման գ/հ նախագծեր պատվիրելու:

ԽՆԴԻՐ 7.2. Խթանել մասնաճյուղի կիրառական հեղափոխությունների իրականացումը և արդյունավետության բարձրացումը, նպաստել արդյունքների առևտրայնացմանը:

Դեռևս ամբիոններին (բացառությամբ ՏՏ Ի և ԱՀ ամբիոնի) չի հաջողվել գործընկերների հետ հաստատել ակտիվ հետազոտական կապեր և իրականացնել համատեղ հետազոտություններ: Մասնաճյուղի ամբիոնների մի մասում գիտական համապատասխան ներուժի սակավությունը, դրա հետ միասին նաև առանձին ամբիոնների գիտական ուղղվածության առանձնահատկությունները, ինչպես նաև՝ գործընկեր ձեռնարկությունների ցածր շահագրգռվածությունը (բացառությամբ ԶՊՄԿ-ի) ստեղծում են որոշակի խոչընդոտներ այդ հարցի դրական լուծման ճանապարհին: Այս ուղղությամբ առաջիկա ժամանակահատվածում հարկ կլինի իրականացնել մի շարք աշխատանքներ, որոնցից մեկն էլ սպասվելիք նոր լաբորատորիաների ստեղծումն է: Հայտ է ներկայացվել նաև ՀՀ կրթության և գիտության նախարարություն՝ մասնաճյուղում պետբյուջեից ֆինանսավորվող ՏՏ գիտական ուղղությամբ բազային լաբորատորիայի ստեղծման համար:

Հաշվետու տարում հաջողությամբ շարունակվել է կատարվել ԶՊՄԿ-ի ֆինանսավորմամբ իրականացվող թիվ 01/-Գ/2010 գիտահետազոտական նախագիծը: Այն ժամկետից շուտ ավարտին է հասցվել և արդյունքները (սպասվելիք զգալի տնտեսական օգուտով) ներկայացվել պատվիրատուին: Ներկայումս ԶՊՄԿ-ի նոր ղեկավարության հետ աշխատանքներ են տարվում գիտահետազոտական

աշխատանքների ընդլայնման ուղղությամբ:

Արտադրական ձեռնարկություններից հետազոտական պատվերներ ստանալու նպատակով մասնաճյուղի ղեկավարությունը փորձում է համակողմանի, այդ թվում գիտահետազոտական, համագործակցության պայմանագրեր կնքել գործընկեր ձեռնարկությունների հետ:

Ինովացիոն նախագծերի մշակմանն ու հետազոտությունների արդյունքների մարքեթինգին և առևտրայինացմանն աջակցելու համար մասնաճյուղում ձևավորվել է նաև Ինովացիոն խորհուրդ:

ԽՆԴԻՐ 7.3. Ապահովել մասնաճյուղի ներգրավվածությունը միջազգային գիտական ծրագրերում:

- Մասնաճյուղի ղեկավարությունը պատրաստակամ է աշխատակիցների համար ապահովել անհրաժեշտ տեղեկատվական և խորհրդատվական աջակցության՝ ֆինանսավորման միջազգային աղբյուրների որոնման և հայտերի մշակման ուղղությամբ: Սակայն գիտական ներուժի առկա պոտենցիալը դեռևս լիարժեք թույլ չի տալիս գիտամանկավարժական կազմին ընդգրկվել միջազգային գիտական նախագծերում, ինչպես նաև մասնաճյուղին՝ մասնակցել ՀՊՃՀ-ում իրականացվող միջազգային գիտական ծրագրերին:
- Բարձր վարկանիշ ունեցող գիտական հանդեսներում հոդվածներ հրատարակած և գիտաժողովների մասնակցած դասախոսներին խրախուսելու մեխանիզմը գիտական խորհրդի որոշմամբ հաստատվել է 2012/13 ուսումնական տարում:
- Սկսած 2006թ.-ից ստեղծված են բոլոր հնարավորությունները ազատորեն օգտվելու հանրապետական և միջազգային անվճար գիտատեղեկատվական ցանցերից: Ներկայումս մասնաճյուղի դասախոսները հնարավորություն ունեն օգտվելու eLibrary համակարգից: ՀՊՃՀ օժանդակությամբ դասախոսները կարող են օգտվել նաև Հայկական վիրտուալ գիտական գրադարանից, Springer և EBSCO համաշխարհային գիտական անգլալեզու շտեմարաններից, ՀՊՃՀ-ի հետ համագործակցող գիտական կազմակերպությունների հաշվողական ռեսուրսներից (կլաստերներից):

Տեղեկատվություն 2013/14 ուսումնական տարում մասնաճյուղի գիտահետազոտական գործունեության վերաբերյալ

1. Բազային և այլ բնույթի գիտահետազոտական լաբորատորիաներ - չկան

2. Մասնակցությունը ֆինանսավորվող գիտական նախագծերին.

Աղյուսակ 7.1

Անվանումը	Գիտական ուղղությունը, թեման	Ղեկավարը (ա.ա.հ., գիտ.աստիճան)	Ամբիոնից ներգրավված աշխատակիցները (ա.ա.հ., գիտ.աստ.)	Տարեկան ֆինանսավորումը	Ֆինանսավորման աղբյուրները
Տնտայյմանագրային գիտահետազոտական նախագիծ թիվ 01-Գ/2010	Գիտ. ուղղ. ՏՏ Թեման. Մոլիբդենային հանքանյութի ֆլոտացման տեխնոլոգիական գործընթացի հավանականային կառավարման նմանակային մոդելի մշակում	Սեյրան Շամիրի Բալասանյան տ.գ.թ.	Գևորգյան Հերմինե Միշայի Աղազուլյան Մանե Անդրանիկի	2012թ.– 3 մլն. դր., 2013թ.– 3,5 մլն. դր.	“ԶՊՄԿ” ՓԲԸ

3. Կազմակերպված գիտական միջոցառումները.

Մասնաճյուղում կանոնավոր կերպով կազմակերպվում են ամենամսյա գիտակրթական սեմինարներ:

Աղյուսակ 7.2

Անվանումը	Տիպը՝ համալսարանական, հայաստանյան, միջազգային	Կազմակերպիչները (ա.ա.հ., գիտ.աստիճան)	Վայրն ու ժամանակը	Ֆինանսավորման աղբյուրները, չափը
Մասնաճյուղային գիտակրթական սեմինար	մասնաճյուղային	Լ.Ն. Պետրոսյան, մանկ. գ. դ. Ս.Շ.Բալասանյան, տեխն. գ. թ. Ա.Մ. Սարգսյան, մանկ. գ. թ.	մասնաճյուղի գլխ. մասնաշենք, թիվ 206 սենյակ, ամենամսյա	-

4. Գիտական հիմնադրամներին և այլ կազմակերպություններին ներկայացված հայտերը.

Աղյուսակ 7.3

Անվանումը	Գիտական ուղղությունը, թեման	Ղեկավարը (ա.ա.հ.,գիտ.աստիճան)	Ակնկալվող ֆինանսավորման չափը	Ֆինանսավորման աղբյուրները
Հանքահարստացման տեխնոլոգիական գործընթացների քոմփյուտերային մոդելավորում և կառավարում	ՏՏ և կառավարում	Ս.Շ.Բալասանյան, տ.գ.թ.	3 մլն. դրամ	Պետբյուջե, ՀՀ ԿԳՆ

5. Հաշվետու տարում ներդրված, ապրանքայնացված նախագծեր - չկան

6. Համարտեղ հետազոտական նախագծերն այլ կազմակերպությունների հետ - չկան

7. Հաշվետու տարում հրատարակված մենագրություններ - չկան

8. Հաշվետու տարում հրատարակված դասագրքեր - չկան

9. Հաշվետու տարում հրատարակված հոդվածները.

Հրատարակվել է 17 հոդված (աղյուսակ 7.4).

Հ/Հ	Հեղինակ(ներ)	Վերնագիրը	Պարբերականը	Մուտք/մասեր	Համար	Էջերը	Հայաստանյան	Արտասահմանյան
1	2	3	4	5	6	7		8
1	Պետրոսյան Լ.Ն.	Ծանրության կենտրոն հասկացությունը և նրա կիրառմամբ խնդիրների լուծման մեթոդաբանությունը	Կրթությունը և գիտությունը Արցախում		3-4 (2013թ.)	39-48	+	
2	Պետրոսյան Լ.Ն.	Ավագ դպրոցի ֆիզիկայի դասընթացում ատոմական մոդելների դիտարկման մի քանի հարցերի մասին	Կրթությունը և գիտությունը Արցախում		1-2 (2014թ.)	54-64	+	
3	Պետրոսյան Լ.Ն. Սարգսյան Ա.Մ Պետրոսյան Ն.Լ	Իներցիայի մոմենտը ֆիզիկայի և մաթեմատիկայի դասընթացներում (մաս 1)	Մաթեմատիկական դպրոցում		2 (2014թ.)	55-63	+	
4	Պետրոսյան Լ.Ն. Սարգսյան Ա.Մ Պետրոսյան Ն.Լ	Իներցիայի մոմենտը ֆիզիկայի և մաթեմատիկայի դասընթացներում (մաս 2)	Մաթեմատիկական դպրոցում		3 (2014թ.)	43-53	+	
5	Баласанян С.Ш., Симонян С.О., Геворгян Э.М.	Компьютерная модель для стохастического управления технологическим процессом флотации руды с учетом надежности измельчительного оборудования	Известия Томского политехнического университета	323	5 (2013г.)	50-57	+	
6	Баласанян С.Ш., Геворгян Э.М., Агагулян М.А. и др.	Оценка важности переменных модели технологической системы флотации медно-молибденовой руды	Вестник ГИУА: Сб. научных статей.	часть 1 (2013г.)		219-225	+	
7	Баласанян С.Ш., Геворгян Э.М.	Иерархическая трехуровневая компьютерная модель технологической системы измельчения руды	Вестник ГИУА, Сб. научно-методических материалов.	1 (2014г.)		127-134	+	
8	Balasanayan S., Gevorgyan H.	The Construction of Statistical Model of a Virtual Object in the LabVIEW Environment	Proceedings of 11th International Conference on Remote Engineering and Virtual Instrumentation REV2014., Porto			291-293		+
9	Եղիազարյան Ա. Մեյմարյան Ա. Զիլինգարյան Ն.	Համալիր հավելանյութերի ազդեցությունը շինարական շաղախների և բետոնների որոշ հատկությունների վրա	ՃՇՀԱՀ-ի գիտական աշխատություններ	2	53 (2014թ.)	163-169	+	
10	Եղիազարյան Ա. Մեյմարյան Ա. Գալստյան Մ.	Կապանի տարածաշրջանի բետոնի և երկաթբետոնի կոնստրուկցիաների կարրոնիզացման ուսումնասիրությունը	ՃՇՀԱՀ-ի տեղակազիր	3	54 (2014թ.)	114-120	+	
11	Մարտիրոսյան Վ.Ա. Սարկիսյան Կ.Վ. Այվազյան Ա. Ա. և այլք	Поведение Дрмбонского сульфидного концентрата и входящих в его состав минералов при механохимической активации	ՀՀ ԳԱԱ և ՀՊՃՀ տեղեկագիր, Տեխնիկական գիտությունների սերիա	66	4 (2013թ.)	304-314	+	

Աղյուսակ 7.4-ի շարունակություն

1	2	3	4	5	6	7	8	9
12	Մարտիրոսյան Վ.Ա. Սատունցյան Մ. Է. Այվազյան Ա. Ա. և այլոք	Մեխանաքիմիան որպես Դրմբոնի ոսկի-պղնձային սուլֆիդային խտանյութերի ծծմբաթթվային տարրալուծ- ման գործընթացի ինտենսիվացման եղանակ	Вестник ГИУА “Металлургия, материало- ведение, недрополь- зование”	17	1 (2014թ.)	9-18	+	
13	Григорян А.Ж.	О несимметричном вдавлении двух жестких штампов в упругую ортотропную полуплоскость, ослабленную выходящим на границу конечным и внутренним полубесконечным вертикальными соосными разрезами	ՃՇՀԱՀ տեղեկագիր		3(41), (2014թ.)	66-71.	+	
14	Григорян А.Ж.	О несимметричном вдавлении двух жестких штампов в упругую ортотропную полуплоскость, ослабленную внутренним вертикальным конечным разрезом	«Լրաբեր», Գի- տական հոդված- ների ժողովածու, ՀՊՃՀ	2 (2014թ.)		334- 339.	+	
15	Սարգսյան Լ. Ավագյան Թ. Խաչատրյան Մ.	Պղնձի, ցինկի և կապարի կորզումը ոսկետար սուլֆի- դային խտանյութից հիդրոմե- տալուրգիական եղանակով	«Լրաբեր», Գի- տական հոդված- ների ժողովածու, ՀՊՃՀ	2 (2014թ.)		461- 467	+	
16	Գևորգյան Հ. Եղիազարյան Լ.	Հանքահարստացման ինովացիոն տեխնոլոգիայի տնտեսական արդյունավե- տությունը («ԶՊՄԿ» ՓԲԸ)	«Լրաբեր», Գի- տական հոդված- ների ժողովածու, ՀՊՃՀ	3 (2014թ.)		720- 725	+	
17	Маркарян К.	Особенности и средства анализа технического текста	Сб. материалов международной кон- ференции «Актуаль- ные вопросы филоло- гических исследова- ний» Краснодар:- «Издательский Дом- Юг», 2013г.			61-64		+

10. Հաշվետու տարում զեկուցումներ գիտաժողովներում.
Գիտաժողովներում զեկուցվել է 7 աշխատանք (աղյուսակ 7.5).

Աղյուսակ 7.5

Հ/Հ	Հեղինակ(ներ)	Վերնագիրը	Գիտաժողովի վերնագիրը	Գիտաժո- ղովի անցկաց- ման վայրը	Գիտաժո- ղովի անցկաց- ման ժամկետ ը	Զեկույցի տեսակը		
						Բանավոր	Ստենդային (poster)	Թեզիսներ (abstract)
1	2	3	4	5	6	7	8	9
1	Balasyan S., Gevorgyan H.	The Construction of Statistical Model of a Virtual Object in the LabVIEW Environment	Proceedings of 11th International Conference on Remote Engineering and Virtual Instrumentation REV2014., Porto	Պորտո, Պորտու- գալիա	փետրվար 2014 թ.	+	+	
2	Սարգսյան Ա.Մ.	Իզոպերիմետրական մեկ խնդրի մասին	ՀՊՃՀ տարեկան գիտաժողով	Երևան	նոյեմբեր 2013թ.	+		

Աղյուսակ 7.5-ի շարունակություն

1	2	3	4	5	6	7	8	9
3	Գրիգորյան Ա.Ժ.	О несимметричном вдавлении двух жестких штампов в упругую ортотропную полуплоскость, ослабленную внутренним вертикальным конечным разрезом	ՀՊՃՀ տարեկան գիտաժողով	Երևան	նոյեմբեր 2013թ.	+		
4	Սարգսյան Լ. Ավագյան Թ. Խաչատրյան Մ.	Պղնձի, ցինկի և կապարի կորզումը ոսկետար սուլֆիդային խտայնությոց հիդրոմետալուրգիական եղանակով	ՀՊՃՀ տարեկան գիտաժողով	Երևան	նոյեմբեր 2013թ.	+		
5	Գևորգյան Հ. Եղիազարյան Լ. Մուսայելյան Ա.	Հանքահարստացման ինովացիոն տեխնոլոգիայի տնտեսական արդյունավետությունը («ԶՊՄԿ» ՓԲԸ)	ՀՊՃՀ տարեկան գիտաժողով	Երևան	նոյեմբեր 2013թ.	+		
6	Մարգարյան Բ.	Актуальность изучения иностранного языка: традиционные и новейшие методы обучения	«Բուհական մանկավարժության ժամանակակից հիմնախնդիրները» միջբուհական գիտաժողով	Ծաղկաձոր	նոյեմբեր 2013թ.	+		
7	Մարգարյան Բ.	Мотивы и потребности изучения иностранного языка. Роль методов обучения.	ՀՊՃՀ տարեկան գիտաժողով	Երևան	նոյեմբեր 2013թ.	+		

11. Գյուլերի արտոնագրեր – չկան

12. Գիտական գործուղումներ.

Աղյուսակ 7.6

Գործուղվողանձը, ա.ա.հ., գիտ.աստիճան	Նպատակը	Գործուղման վայրը	Ֆինանսավորման աղբյուրը	Հաշվետվության ձևը
Ա.Շ. Բալասանյան, տ.գ.թ.	Մասնակցություն «Հեռավար ճարտարագիտություն և վիրտուալ գործիքամիջոցներ REV 2014» միջազգ. գիտաժողովին	Պորտո, Պորտուգալիա	ՏԵՄՊՈՍ (80%) ՀՊՃՀ Կապանի մասնաճյուղ (20%)	Գիտական հոդված

13. Մասնակցությունը գիտական մրցույթներին - չկա

14. Մասնագիտական խորհուրդներում աշխատակիցների ներգրավվածությունը.

Աղյուսակ 7.7

Աշխատակիցը (ա.ա.հ.)	Գիտական աստիճանը	Մասնագիտական խորհուրդը	Մասնագիտությունների թվանիշերը խորհրդում
Պետրոսյան Լեոնիկ Նահապետի	մանկ.գ.դ.	Մանկավարժություն, Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ	020/ԺԳ.00.01, ԺԳ.00.02

15. Ասպիրանտները, հայցորդները.

Երեք աշխատակիցներ հանդիսանում են ՀՊՃՀ Երևանի կրթահամալիրի և ԵՊԼՀ հայցորդներ (աղյուսակ 7. 8).

Աղյուսակ 7.8

Ասպիրանտ/հայցորդ (ա.ա.հ.)	Ուսուցման ձևը (առկա, հեռակա ասպ., հայցորդ), կուրսը	Գիտական ղեկավարը (ա.ա.հ., գիտ. աստիճան)
Եղիազարյան Լիլիթ Գարսևանի	հայցորդ, 2-րդ տարի	Գևորգյան Հ.Գ., տ.գ.թ.
Գևորգյան Հերմինե Միշայի	հայցորդ, 2-րդ տարի	Բալասանյան Ս.Շ., տ.գ.թ.
Մարգարյան Քրիստինա Արայի	հայցորդ, 1-ին տարի	Առաքելյան Ն.Կ., մ.գ.թ.

16. Հաշվետու տարում ավարտած ասպիրանտները, հայցորդները.

Աղյուսակ 7.9

Ասպիրանտ/հայցորդ (ա.ա.հ.)	Պաշտպանությանօրը	Հատկացված հաստիքը, ամբիոնը
Պետրոսյան Նահապետ Լեոնիկի	կայացել է ատենախոսության նախնական քննարկումը խորհրդում, առաջիկա ամիսներին կկայանա պաշտպանությունը	դասախոս, Մ և ԲԱ ամբիոն

17. Հաշվետու տարում պաշտպանված արենախոսություններ - չկան

18. Գիտահետազոտական աշխատանքներում ներգրավված աշխատակիցների թիվը (%) - 20 (մոտ 53%):

19. Գիտական սարքավորումները.

- Մասնաճյուղում 12 համակարգիչ նախատեսված է միայն գիտահետազոտական աշխատանքների կատարման համար: Աշխատակիցներն օգտվում են նաև ՏՏ Ի և ԱՀ ամբիոնի համակարգչային լաբորատորիաներից: Նշված քոմպիյութերներն օպտիկական կապուղով լծորդված են բարձր թողունակությամբ (8 Մբ/վրկ սիմետրիկ կապ) ինտերնետին:
- 2013 թվականին 01-Գ/2010 տնտայամանագրային նախագծի միջոցներով ձեռք են բերվել 2 քոմպիյութեր և 1 պլանշետ:
- ՀՀ կրթության և գիտության նախարարություն է ներկայացվել հայտ մասնաճյուղում պետբյուջեից ֆինանսավորվող ՏՏ գիտական ուղղվածությամբ բազային լաբորատորիայի ստեղծման համար:
- Մետալուրգիական ուղղվածությամբ գիտահետազոտական աշխատանքները (մինչև 1000°C ջերմաստիճան պահանջող) կարող են իրականացվել ինդուկցիոն և մուֆելային վառարանների օգնությամբ, որոնք գտնվում են բարվոք տեխնիկական վիճակում:
- Ընթացքի մեջ են տեղեկատվական տեխնոլոգիաների և լեռնամետալուրգիական ուղղվածության լաբորատորիաների շահագործման աշխատանքները:

20. Առաջարկություններ

Մասնաճյուղի գիտահետազոտական գործունեության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով անհրաժեշտ է.

- շարունակել ուսումնական և գիտահետազոտական ենթակառուցվածքների արդիականացման և զարգացման աշխատանքները,

- տեղեկատվական տեխնոլոգիաների և լեռնամետալուրգիական ուղղվածության լաբորատորիաների շահագործումից հետո հետևողական աշխատանքներ տանել հետազոտական խմբերի ձևավորման, ֆինանսավորվող գիտական նախագծերի մրցույթներին մասնակցության ապահովման, ինչպես նաև գործընկեր ձեռնարկությունների պատվերով (կամ համատեղ) հետազոտությունների ծավալի աճի ուղղություններով,
- աշխատանքներ տանել կիրառական խնդիրների լուծման, ստացված արդյունքների ապրանքայնացման ու ներդրման ուղղություններով,
- համապատասխան ֆինանսական ռեսուրսների առկայության դեպքում մշակել մեխանիզմներ գիտահետազոտական աշխատանքներ կատարող դասախոսներին նյութապես խրախուսելու համար,
- ուսանողության շրջանում գիտության նկատմամբ հետաքրքրության խթանման նպատակով կազմակերպել ուսանողական սեմինարներ և գիտաժողովներ, հնարավորության դեպքում ուսանողներին ընդգրկել հետազոտական աշխատանքներում:

ՀՊՃՀ Կապանի մասնաճյուղի 2012-2016թթ. ռազմավարական պլանով նախանշված առաջընթացի գնահատման կողմնորոշիչ ցուցանիշները և նպատակ 7-ի կատարողականը

Հ/Հ	ՌԾ-ով նախանշված ցուցանիշը	2012/13 ուս.տարի	2013/14 ուս.տարի	2014/15 ուս.տարի (01.11.2014թ.)
1.	2016 թվին մասնաճյուղի դասախոսական կազմի առնվազն 40%-ի մասնակցություն գիտահետազոտական աշխատանքներին:	50%	53%	53%
2.	Մասնաճյուղի հետազոտական նախագծերի ծավալը 2016 թվին՝ առնվազն՝			
	– գիտության արտաբյուջետային ֆինանսավորման տարեկան աճ 5%-ով,	-	-	-
	– պայմանագրային աշխատանքների ծավալի աճ՝ 2 անգամ,	1 տնտայսյմ. աշխատանք	1 տնտայսյմ. աշխատանք	-
	– մեկ դասախոսին ընկնող հետազոտական հատկացումների տարեկան աճ՝ 5%-ով:	-	-	-
3.	Գիտության վրա ծախսված գումար/արդյունքում ստացված գումար հարաբերակցությունը միջին տարեկան կտրվածքով՝ առնվազն 2:1:	-	-	-
4.	Առնվազն 1 գիտահետազոտական լաբորատորիա և (կամ) կենտրոն:	-	Սկսվել էին ստեղծման ուղղությամբ աշխատանքները	Ընթացքի մեջ են շահագործման աշխատանքները
5.	Մասնաճյուղում գործող լիարժեք ինովացիոն խորհուրդ:	Մշակվել և հաստատվել է խորհրդի կանոնակարգը	Ստեղծվել է խորհրուրդը	Խորհուրդն առկա է

ԸՆԴԱՅՆԵԼ ԳՈՐԾԸՆԿԵՐԱՅԻՆ ԿԱՊԵՐԸ, ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՒՄ ԱՊԱՀՈՎԵԼ ԱՐՏԱՔԻՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ, ԶԱՐԳԱՑՆԵԼ ՀԱՆՐԱՅԻՆ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻՆ

ԽՆԴԻՐ 8.1. Ամրապնդել և ընդլայնել մասնաճյուղի գործընկերային կապերը տարածաշրջանի արտադրական ձեռնարկությունների, այլ կազմակերպությունների և հանրային կառույցների հետ:

Մասնաճյուղի զարգացման, ճարտարագիտական կրթությամբ որակյալ մասնագետների ուսուցման համար կարևոր գործոններից է նաև արտաքին շահակիցների (գլխավորապես՝ տարածաշրջանի արտադրական ձեռնարկությունների) հետ մասնաճյուղի գործընկերային կապերի ամրապնդումը և ընդլայնումը:

Շարունակվում են տարածաշրջանի աշխատաշուկայի առկա վիճակի և զարգացման միտումների մոնիթորինգի իրականացման, մասնաճյուղի հնարավոր գործատու կազմակերպությունների տվյալների բազայի ձևավորման ուղղությամբ տարվող աշխատանքները:

Հաշվետու ժամանակաշրջանում մեծածավալ աշխատանքներ են տարվել տարածաշրջանի լեռնահանքային ոլորտի ձեռնարկությունների հետ երկարաժամկետ պայմանագրային հարաբերությունների ձևավորման ուղղությամբ. «Ագարակի պղնձամուլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի հետ կնքվել է 1 ռազմավարական գործընկերության և 6 պրակտիկաների անցկացման պայմանագիր, ինչպես նաև նախնական պայմանավորվածություն է ձեռք բերվել աշխատակիցների վերապատրաստման և որակավորման բարձրացման դասընթացների կազմակերպման համար, «ԴԱՆԴԻ ՓՐԻՇՍ ՄԵԹԱԼՍ ԿԱՊԱՆ» ՓԲԸ-ի հետ կնքվել է 1 ռազմավարական գործընկերության և 8 պրակտիկաների անցկացման պայմանագիր: Իրականացվում են աշխատանքներ «Զանգեզուրի պղնձամուլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի հետ երկարաժամկետ համագործակցության պայմանագրի կնքման ուղղությամբ: Մասնաճյուղը համագործակցության (ռազմավարական գործընկերության) պայմանագրեր ունի նաև «ԱՏ-ՄԵՏԱԼՍ» ՍՊԸ, «Կապանի մեքենաշինական գործարան» ԲԲԸ և Կապանի «Նորոզին» ՍՊԸ հետ:

Նշված պայմանագրերի կնքմանը զուգընթաց անհրաժեշտ է կոնկրետ քայլեր կատարել համագործակցությունն էլ ավելի գործնական և արդյունավետ դարձնելու համար:

2013 թվականից մասնաճյուղը համագործակցում է «Քրոնիմետ մայնինգ» ընկերության «Քրոնիմետ» բարեգործական հիմնադրամի և «Ձեռնարկությունների Ինկուբատոր» հիմնադրամի հետ՝ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում համատեղ գործունեության իրականացման նպատակով:

Մասնաճյուղը պետք է առավել ակտիվացնի աշխատանքները մասնաճյուղ-տնտեսություն փոխկապակցության գործուն համակարգի ստեղծման համար, ինչպես նաև՝ մասնաճյուղի շրջանավարտներին մասնագիտական աշխատանքով ապահովելու և գործընկերային նոր կապեր ձևավորելու գործընթացին նպաստելու նպատակով պարբերաբար իրականացնի ուսանողների և դասախոսների հանդիպումներ հիմնական գործատու կազմակերպությունների և աշխատաշուկային առնչվող հասարակական կառույցների ներկայացուցիչների հետ:

2013 թվականի նոյեմբերի 1-ի դրությամբ մասնաճյուղը պայմանագրային հիմունքներով համագործակցել է 26, իսկ 2014 թվականի նոյեմբերի 1-ի դրությամբ՝ 20 կազմակերպությունների հետ (աղյուսակ 8.1):

Աղյուսակ 8.1

Գործընկեր ուսումնական և գործընկեր ոչ ուսումնական հաստատություններ

ՀՀ	Հաստատության անվանումը	Համագործակցության ոլորտը	Պայմանագրի կնքման տար.
1.	ՀՀ ԱԻՆ «Սեյսմիկ պաշտպանության հարավային ծառայություն» ՊՈԱԿ	պրակտիկայի անցկացում	2012
2.	ՀՀ ԱՍՀՆ աշխատակազմի «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության Կապանի զբաղվածության մարզային կենտրոն	պրակտիկայի անցկացում	2012
3.	«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ Կապան մասնաճյուղ	պրակտիկայի անցկացում	2012, 2013
4.	«ՍՅՈՒՆԻ-ՔՈՄ» ՍՊԸ	պրակտիկայի անցկացում	2012
5.	«ԼԱՄԱՔՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ	պրակտիկայի անցկացում	2012
6.	«Կապանի մեքենաշինական գործարան» ԲԲԸ	ռազմավարական գործընկերություն	2012
7.	«ՕՐԱՆԺ ԱՐՄԵՆԻԱ» Հիմնադրամ	ուսանողներին կրթաթոշակի տրամադրում	2012
8.	«Կապանի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ	լաբորատոր պարապմունքների անցկացում	2013
9.	Կապանի «Նորոգչին» ՍՊԸ	ռազմավարական գործընկերություն պրակտիկայի անցկացում	2013
10.	«ԱՏ-ՄԵՏԱԼԱ» ՍՊԸ	ռազմավարական գործընկերություն	2013
11.	«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	պրակտիկայի անցկացում	2013
12.	«Արքիթեքթոնիք» ՍՊԸ	պրակտիկայի անցկացում	2013
13.	«ԴԱՆԴԻ ՓՐԻՇՍ ՄԵԹԱԼՍ ԿԱՊԱՆ» ՓԲԸ	ռազմավարական գործընկերություն պրակտիկայի անցկացում	2014
14.	«Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	ռազմավարական գործընկերություն պրակտիկայի անցկացում	2014
15.	ՀՀ ԱՆ աշխատակազմի պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության Սյունիքի մարզային կենտրոն	ռազմավարական գործընկերություն	2014
16.	«Արդշինինվեստբանկ» ՓԲԸ «Կապան» մասնաճյուղ	պրակտիկայի անցկացում	2013
17.	«Նոր Հորիզոն» ՈՒՎԿ ՍՊԸ	պրակտիկայի անցկացում	2013
18.	«Յունիքանկ» ՓԲԸ «Կապան» մասնաճյուղ	պրակտիկայի անցկացում	2013
19.	«Կապանի ԲՈՒԱՏ» ՓԲԸ	պրակտիկայի անցկացում	2013
20.	«ԼԱՎ ԸՆԿԵՐ» ՍՊԸ	պրակտիկայի անցկացում	2013

Ներկայումս աշխատանքեր են տարվում «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ, «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ, ՀՀ ԳԱԱ Քիմիական ֆիզիկայի ինստիտուտի Կապանի մետալուրգիայի և հանքահարստացման լաբորատորիայի, «Հայրուսգազարդ» ՓԲԸ, «ԴԵԴԱԼ» ՍՊԸ հետ՝ պրակտիկայի անցկացման կարճաժամկետ պայմանագրերը երկարաժամկետ պայմանագրերով փոխարինման համար, իսկ «Զափագիտության ազգային ինստիտուտ» ՓԲԸ, ՀՀ ԱԻՆ «Սեյսմիկ պաշտպանության հարավային ծառայություն» ՊՈԱԿ և «Կապանի նորոգչին» ՍՊԸ հետ՝ լաբորատոր պարապմունքների անցկացման պայմանագրերի վերակնքման ուղղությամբ:

Աշխատանքներ են տարվում նաև քոլեջ-բուհ անցման գործընթացին առնչվող նոր պայմանագրերի կնքման ուղղությամբ. «Սյունիքի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ (3 մասնագիտություն), «Մեղրու պետական քոլեջ» ՊՈԱԿ (1 մասնագիտություն) և «Հայաստանում Եվրոպական քոլեջ» հիմնադրամ (2 մասնագիտություն):

ԽՆԴԻՐ 8.2. Մասնաճյուղի զարգացման ծրագրերում շրջանավարտների, նվիրարու և հովանավոր կազմակերպությունների ու անհատների ներդրումների իրականացման ուղղությամբ աշխատանքների իրականացում:

Մասնաճյուղը կարևորում է զարգացման ծրագրերում շրջանավարտների ներգրավման գործոնը՝ մասնաճյուղ-գործատու կապի ամրապնդման, մասնաճյուղի ընթացիկ խնդիրների լուծման հարցերում: Մասնավորապես, շրջանավարտների ներգրավման միջոցով առավել գործնական է դարձել կապը «Ագարակի պղնձամուլիբդենային կոմբինատ» ՓԲԸ հետ: Հաշվետու ժամանակաշրջանում շարունակվել են աշխատանքները շրջանավարտների հետ կապի բարելավման և ընդլայնման, շրջանավարտների վերաբերյալ բազայի պարբերաբար նորացման և թարմացման ուղղությամբ:

Մասնաճյուղի զարգացման ծրագրերի իրականացման գործընթացին իր ֆինանսական մեծ աջակցությունն է ցուցաբերել «Ջանգեզուրի պղնձամուլիբդենային կոմբինատ» ՓԲԸ:

2013/14 ուսումնական տարում շարունակվել է համագործակցությունը «ԵՐՊԻ-ՀՊՃՀ Շրջանավարտների միություն» հասարակական կազմակերպության, «ՕՐԱՆԺ ԱՐՄԵՆԻԱ» Հիմնադրամի և ՎիվաՍել-ՄՏՍ («Ղ-Տելեկոմ» ՓԲԸ) ընկերության հետ, մասնավորապես նրանց կողմից սոցիալական ծրագրերի շրջանակներում մասնաճյուղի սոցիալապես անապահով մի շարք ուսանողների տրամադրվել է կրթաթոշակ («ԵՐՊԻ-ՀՊՃՀ Շրջանավարտների միություն» ՀԿ Լոս-Անջելեսի շրջանավարտների միություն՝ 2014թ.-242,336 հազ. դրամ, «ՕՐԱՆԺ ԱՐՄԵՆԻԱ» Հիմնադրամ՝ 2013թ.-1000 հազ. դրամ, ՎիվաՍել-ՄՏՍ ընկերություն՝ 2014թ.-1570,3 հազ. դրամ):

Անհրաժեշտ է ավելի ընդարձակել մասնաճյուղի և նշված կազմակերպությունների համագործակցության սահմանները:

Մինչև տարեվերջ մասնաճյուղում ավարտին կհասցվի «Հանքահարստացման և մետալուրգիայի» գիտահետազոտական լաբորատորիայի ստեղծման և կահավորման աշխատանքները, որին իր աջակցությունն է ցույց տվել ՀՊՃՀ-ն, իսկ լաբորատոր գույքի ձեռքբերումը իրականացվում է Համաշխարհային բանկի ծրագրով:

ԽՆԴԻՐ 8.3. Զարգացնել հասարակության հետ մասնաճյուղի կապերը, ապահովել հանրային ծրագրերում մասնաճյուղի առավելագույն ներգրավումը:

Այս ուղղությամբ նշանակալից իրադարձություն էր մասնաճյուղի կայքի գործարկումը, որը լայն հնարավորություններ է ընձեռում ներկայացնելու և լուսաբանելու մասնաճյուղի գործունեությունը: Կայքն անընդհատ թարմացվում է, և հանրությունը օպերատիվ կերպով կարող է ծանոթանալ մասնաճյուղի ընթացիկ գործունեությանը:

Մեծ ուշադրություն է դարձվել նաև մասնաճյուղի դրական իմիջի պահպանման ու ամրապնդման և նրա հասարակական վարկանիշի բարձրացման նպատակով գովազդային-լրատվական, քարոզչական և մարքեթինգային բոլոր կարողությունների օգտագործմանը:

Մասնաճյուղի գործունեության ակտիվ լուսաբանման նպատակով շարունակվել են ակտիվ համագործակցությունը Սյունիքի մարզի ողջ տարածքով հեռարձակվող («ՍՈՍԻ»)

և Կապան քաղաքում հեռարձակվող («ԽՈՒՍՏՈՒՓ ԹԻՎԻ») հեռուստաալիքների, «Սյունաց երկիր» մարզային թերթի հետ: Հաշվետու ժամանակաշրջանում նշված ՁԼՄ-ներին, ինչպես նաև «Պոլիտեխնիկ» պաշտոնական ամսաթերթին ուղարկվել են հոդվածներ, տրամադրվել նյութեր, տրվել հարցազրույցներ, որոնց հիման վրա հեռարձակված, տպագիր ու էլեկտրոնային լրատվական միջոցներում լույս տեսած հրապարակումների շնորհիվ հանրությունն իրազեկվել է ներմասնաճյուղային կյանքին առնչվող առավել հետաքրքիր և կարևոր միջոցառումների ու իրադարձությունների մասին (20 տրամադրված նյութեր, 6 հարցազրույցներ): Մասնաճյուղի գործունեությանն առնչվող անդրադարձները ՁԼՄ-ներում կազմել է 15:

2013/14 ուսումնական տարում մասնաճյուղի գործունեության արտաքին լուսաբանման նպատակով ստեղծվել են սեփական գովազդային նյութեր, իսկ ընդունելությանն ընդառաջ տպագրվել է հատուկ գովազդային բուկլետ, որտեղ զետեղվել է ամբողջական տեղեկատվություն մասնաճյուղի ֆակուլտետների, մասնագիտությունների, լաբորատոր բազայի և գործատուների հետ ունեցած կապի վերաբերյալ:

Աշխատանքներ է իրականացնում հանրային կարիքներին ուղղված տարածաշրջանային (տեղական) ծրագրերում մասնաճյուղի ակտիվ ներգրավման և PR գործունեությունն առավել օպերատիվ և նպատակային դարձնելու ուղղություններով:

ԽՆԴԻՐ 8.4. Ձգտել պահովելու մասնաճյուղի պատշաճ մասնակցությունը ՀՊՃՀ-ի միջազգային համագործակցության ծրագրերին, նպաստել Բոլոնիայի գործընթացի հայաստանյան զարգացումներում ՀՊՃՀ-ի առաջատար դերի պահպանմանը:

Հաշվետու ժամակաշրջանում մասնաճյուղը, հիմնականում ՀՊՃՀ շրջանակներում, շարունակել է ընդլայնել արտասահմանյան առաջատար ԲՈՒՀ-երի հետ միջազգային համագործակցության առկա փորձը:

2012 թվականից մասնաճյուղը որպես ինքնուրույն կատարող ընդգրկված է Իլմենաուի (Գերմանիա) տեխնիկական համալսարանի (ԻՏՀ) համակարգմամբ, եվրոպական երկրների 9 բուհի եւ 13 ընկերության մասնակցությամբ իրականացվող TEMPUS «Արտադրական համագործակցություն և հեռավար ու վիրտուալ գործիքամիջոցների վրա հիմնված ստեղծագործ ճարտարագիտական կրթություն» նախագծում: Նախագծի շրջանակներում իրականացվում են աշխատանքներ հեռավար լաբորատորիաների ցանցի ստեղծման ուղղությամբ, որից կարող են օգտվել նախագծի մասնակից բուհերի ուսանողները: Ծրագրի հաջող ավարտի դեպքում մասնաճյուղում կստեղծվի Իլմենաուի համալսարանի կողմից մշակված շուրջ 27000 եվրո արժողությամբ տեղեկատվական տեխնոլոգիաների ուղղվածության հիբրիդային լաբորատորիա, որը էականորեն կօժանդակի ուսանողների մասնագիտական կարողությունների և գործնական հմտությունների ձեռքբերմանը:

Միջազգային TEMPUS ծրագրի և PICQA ծրագրի շրջանակներում իրականացվել են 4 աշխատակիցների արտասահմանյան գործուղումներ (Գերմանիա, Պորտուգալիա, Վրաստան):

Մասնաճյուղը ՀՊՃՀ օժանդակությամբ շարունակում է ակիվորեն մասնակցել Բոլոնիայի գործընթացի հայաստանյան զարգացումներին՝ ձգտելով նպաստել այդ գործընթացում ՀՊՃՀ առաջատար դերի պահպանմանը:

ՀՊՃՀ Կապանի մասնաճյուղի 2012-2016թթ. ռազմավարական պլանով նախանշված առաջընթացի գնահատման կողմնորոշիչ ցուցանիշները և նպատակ 8-ի կատարողականը

Հ/Հ	ՌԾ-ով նախանշված ցուցանիշը	2012թ.	2013թ.	2014թ. (31.09.2014թ.)
1.	Մասնաճյուղ-արդյունաբերություն փոխկապակցության նորովի գործող համակարգ (կառույց), հիմնական պատվիրատու կազմակերպությունների վերաբերյալ տարեկան պարբերականությամբ թարմացվող տվյալների բազա (սկսած 2012/2013 ուստարվանից):	Իրականացվել են աշխատանքներ մասնաճյուղի հնարավոր գործատու կազմակերպությունների տվյալների բազայի ձևավորման ուղղությամբ	Ստեղծվել էր «Գիտության, արտաքին կապերի և ուսանողների կարիերայի աջակցման» բաժին: Շարունակվել են աշխատանքները մասնաճյուղի հնարավոր գործատու կազմակերպությունների տվյալների բազայի ձևավորման ուղղությամբ	Տարվում են աշխատանքներ մասնաճյուղի հնարավոր գործատու կազմակերպությունների տվյալների բազայի թարմացման ուղղությամբ
2.	Երկարաժամկետ պայմանագրային հիմունքներով գործող համատեղ ուսումնական կենտրոն (մասնաճյուղ, ամբիոն, լաբորատորիա)՝ տեղական և արտասահմանյան առաջատար ընկերությունների հետ (2016թ.՝1-2):	-	-	-
3.	Մասնաճյուղի հետ համագործակցող գործընկեր ձեռնարկությունների թիվը (ըստ կնքված պայմագրերի)՝ տարեկան 10-15:	11	26 կազմակերպություն (30 պայմանագիր)	20 կազմակերպություն (23 պայմանագիր)
4.	Շրջանավարտների տվյալների բազա՝ էլեկտրոնային կապի հնարավորություններով:	Սկսվել են համապատասխան աշխատանքները	Շարունակվել են տվյալների բազայի ձևավորման աշխատանքները	Աշխատանքների շարունակում են
5.	Արտաքին ներդրումների ու նվիրատվությունների հաշվեկշռային աճ՝ արտաբյուջետային տարեկան ընդհանուր մուտքերի 5-10%-ի չափով:	-	-	19,8% (արտաբյուջետային տարեկան ընդհանուր մուտքերի նախահաշվային արժեքի նկատմամբ)
6.	Արտաքին («Պոլիտեխնիկ» հիմնադրամը ներառյալ) հովանավորությամբ իրականացվող առնվազն 5 զարգացման նախագծեր և ծրագրեր (5 տարվա կտրվածքով):	-	«Քրոնիմետ» հիմնադրամի 1 ծրագիր	«Քրոնիմետ» հիմնադրամի 1 ծրագիր
7.	Մասնաճյուղի հնարավորությունների և ծառայությունների մարքեթինգի իրականացման միասնական ծրագիր:	-	-	-
8.	Մասնաճյուղի PR ակտիվության (լրատվական-գովազդային և մարքեթինգային միջոցառումներ) աճ՝ առնվազն 1,5 անգամ՝ 2011 թ. ցուցանիշի նկատմամբ:	8	13	18
9.	Մասնաճյուղի վերաբերյալ ՉԼՄ անդրադարձերի (PR արդյունավետության) թվի աճ՝ առնվազն 1,5 անգամ՝ 2011թ. ցուցանիշի նկատմամբ:	3	10	12

10.	Նախագծերի մշակմանը, դրամաշնորհների ձեռքբերմանն ու միջազգային կապերի ձևավորմանն աջակցող խորհուրդ:	-	ԳԱԿ և ՈՒԿԱ բաժնի գործառույթներում ներառվել էին նաև այս կետում նշված գործառույթները	Ներառված է ԳԱ գծով տեղակալի ու ԿՈԱ և ԱԿ բաժնի գործառույթներում
11.	ՀՊՃՀ-ի արտասահմանյան գործընկերային կապերի, միջազգային նախագծերի և այլ ծրագրերի շրջանակներում մասնաճյուղի ներկայացուցիչների շարժը (գործուղումներ) դեպի արտասահմանյան համալսարաններ՝ տարեկան 1-2:	2	3	4

ԵՃՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամփոփելով 2013/14 ուսումնական տարում ՀՊՃՀ Կապանի մասնաճյուղի գործունեության հիմնական արդյունքները և գնահատելով դրանք մասնաճյուղի 2012-2016թթ. ռազմավարական ծրագրի խնդիրների կատարման տեսանկյունից, կարելի է արձանագրել հետևյալը.

Շարունակվել են ռազմավարական ծրագրի արդյունավետ իրականացմանը միտված նախորդ տարում սկսած աշխատանքները, մասնավորապես.

1. բակալավրի կրթական ծրագրով հեռակա ուսուցման մասնագիտությունների ցանկում ավելացվել է 2 մասնագիտություն, ընդլայնվել և ակտիվացվել ընդունելության գովազդարշավը, անհրաժեշտ աշխատանք է տարվել լրացուցիչ և շարունակական կրթության համակարգի ձևավորման ուղղությամբ,
2. շարունակական բնույթ են կրում կրթության որակի գնահատման և ապահովման ներմասնաճյուղային համակարգի ձևավորման, ուսուցման գործընթացի և դասախոսական կազմի բարելավման ուղղություններով տարվող աշխատանքները,
3. աշխատանքներ են տարվել կառավարման համակարգի արդյունավետության բարձրացման, մասնաճյուղի կառավարման անհրաժեշտ իրավական-նորմատիվային բազայի ապահովման, վարչակազմի որակական առաջընթացի ուղղություններով,
4. որոշակի առաջընթաց է գրանցվել ուսանողների ինքնավարության զարգացման, մասնաճյուղի կառավարման և որոշումների ընդունման գործընթացում ուսանողների մասնակցության լիարժեք ապահովման ուղղություններով,
5. զգալի աշխատանք է տարվել ուսումնական և աշխատանքային պայմանների բարելավման, տեղեկատվական ռեսուրսներով ապահովվածության, ինֆրակառուցվածքի պահպանման ուղղություններով,
6. նախապատրաստական աշխատանքներ են կատարվել տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի ծրագրերում մասնաճյուղի մասնակցության, գիտական ներուժի զարգացման և գիտահետազոտական աշխատանքներում դասախոսների ներգրավվածության ընդլայնման ուղղություններով,
7. զարգացվել ու ընդլայնվել են գործընկերային կապերը և շրջանավարտների ներգրավվածությունը մասնաճյուղի զարգացման խնդիրներում,
8. աճել է մասնաճյուղի PR ակտիվությունը և զարգացվել հասարակության հետ մասնաճյուղի կապերը,
9. մասնաճյուղը ներգրավված է միջազգային ծրագրերում և ապահովում է ակտիվ մասնակցություն Բոլոնիայի գործընթացի հայաստանյան զարգացումներում:

Նշված դրական առաջընթացների հետ միասին առկա են որոշակի թերացումներ ու բացթողումներ: Արձանագրված թերացումների շտկման և դեռևս չիրականացված խնդիրների լուծման ուղղությամբ անհրաժեշտ է ձեռնարկել կոնկրետ միջոցառումներ: Այդ կապակցությամբ որպես առաջարկություններ կարելի է նշել հետևյալը.

Անհրաժեշտ է.

1. մշտական ուշադրության կենտրոնում պահել դիմորդների հոսքի կայունացման ուղղությամբ տարվող աշխատանքները,
2. ձևավորել լրացուցիչ և շարունակական կրթության արդյունավետ և զարգացող համակարգ, որը հնարավորություն կտա մասնաճյուղին լիարժեք ներգրավվել հանրային կարիքների բավարարմանն ուղղված տարածաշրջանային ծրագրերում,

3. շարունակաբար բարելավել կրթության որակը և շրջանավարտների գործնական պատրաստվածության մակարդակը,
4. բազմազանեցնել ֆինանսական ներհուսքերը և ապահովել ֆինանսական ռեսուրսների շարունական աճ,
5. իրականացնել սոցիալական ծրագրեր (ներառյալ՝ աշխատողների խրախուսման և սոցիալական օգնության ֆոնդերի ստեղծում),
6. մասնաճյուղի զարգացման ծրագրերում ակտիվորեն ներգրավել շրջանավարտներին, արտադրական ձեռնարկություններին և հանրությանը,
7. շարունակել մասնաճյուղ-տնտեսություն փոխկապակցության գործուն համակարգի ստեղծման ուղղությամբ տարվող աշխատանքները,
8. շարունակական աշխատանքներ իրականացնել միջազգային ծրագրերում մասնաճյուղի ներգրավվածության ընդլայնման ուղղությամբ,
9. շարունակել գիտական ներուժի և գիտական հենքի զարգացման, ուսումնագիտական լաբորատոր բազայի արդիականացման և զարգացման ուղղություններով տարվող աշխատանքները,
10. ձեռք բերել գրադարանային նոր ռեսուրսներ,
11. շարունակել ուսումնական և աշխատանքային պայմանների բարելավման ուղղությամբ տարվող աշխատանքները,
12. անդրադառնալ մասնաճյուղի 2012-2016թթ. Ռազմավարական ծրագրի կատարման ընթացքին և անհրաժեշտության դեպքում կատարել ընթացիկ շտկումներ՝ պայմանավորված 2012 թվականին չկանխատեսված արտաքին միջավայրային ներկայիս ոչ բարենպաստ ցարգացումներով:

ՀՊՃՀ (Պոլիտեխնիկ) Կապանի մասնաճյուղի լաբորատոր բազայի և մասնագիտական կաբինետների լուսանկարները

Ֆիզիկայի լաբորատորիա-լսարան



Քիմիայի լաբորատորիա-լսարան




Ինֆորմացիոն տեխնոլոգիաների լաբորատորիա-լսարան



Էլեկտրատեխնիկայի լաբորատորիա



Քոմպյուտերային լաբորատորիա-լսարան



Ընդերքաբանության լաբորատորիա-լսարան



Շինարարության լաբորատորիա



Մետալուրգիայի և նյութագիտության լաբորատորիա-լսարան



Ինֆորմացիոն տեխնոլոգիաների-հեռավար (online) ուսուցման լսարան



Գեոդեզիայի կաբինետ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան	2
Ընդհանուր տեղեկատվություն ՀՊՃՀ Կապանի մասնաճյուղի վերաբերյալ	3
ՆՊԱՏԱԿ 1. Ապահովել մասնաճյուղի մուտքի բազմազանեցում և համապատասխանություն արտաքին միջավայրի պահանջներին, բավարար մակարդակի հասցնել ուսանողական համակազմը	5
ԽՆԴԻՐ 1.1. Համապատասխանեցնել մասնաճյուղի ընդունելության կառուցվածքը և չափաքանակները աշխատաշուկայի և կրթաշուկայի պահանջներին	5
ԽՆԴԻՐ 1.2. Ակտիվացնել ընդունելության մարքեթինգային գործընթացները	5
ԽՆԴԻՐ 1.3. Զարգացնել լրացուցիչ և շարունակական կրթության համակարգը	6
Բակալավրի կրթական ծրագրով առկա ուսուցման ընդունելություն	7
Բակալավրի կրթական ծրագրով հեռակա ուսուցման ընդունելություն	10
Մասնաճյուղի ուսանողական համակազմը	12
Մասնաճյուղի շրջանավարտները	15
ՀՊՃՀ Կապանի մասնաճյուղի 2012-2016թթ. ռազմավարական պլանով նախանշված առաջընթացի գնահատման կողմնորոշիչ ցուցանիշները և նպատակ 1-ի կատարողականը	16
ՆՊԱՏԱԿ 2. Մասնաճյուղում ապահովել կրթական ծրագրերին և պետական միասնական չափանիշների պահանջներին համապատասխանող որակյալ կրթություն	17
ԽՆԴԻՐ 2.1. Ներհամալսարանական համակարգի շրջանակներում ներդնել ուսուցման որակի գնահատման և ապահովման ներմասնաճյուղային համակարգ՝ բարձրագույն կրթության որակի ներքին արժևորման եվրոպական ENQA չափանիշների պահանջներին համապատասխան	17
ԽՆԴԻՐ 2.2. Ապահովել արդի միջազգային չափանիշներին և աշխատաշուկայի պահանջներին համահունչ ՀՊՃՀ-ում մշակվող նոր ծրագրերի ներդրումը մասնաճյուղում	17
ԽՆԴԻՐ 2.3. Մասնաճյուղում ապահովել կրեդիտային համակարգի ընդլայնված կիրառությունը	18
ԽՆԴԻՐ 2.4. Ստեղծել անհրաժեշտ պայմաններ և մեխանիզմներ՝ ուսումնառության, դասավանդման և գնահատման գործընթացների էական բարելավման համար	18
ԽՆԴԻՐ 2.5. Նախապատրաստվել ՄԿՈԱԱԿ-ի կողմից մասնաճյուղի կրթական ծրագրերի արտաքին փորձաքննական գնահատման և հավատարմագրման փուլային գործընթացին	23
Տեղեկատվություն 2013/14 ուսումնական տարում մասնաճյուղում ուսուցման գործընթացի կազմակերպման վերաբերյալ	23
Ուսումնական գործընթացի հսկողությունը	23
Պրակտիկաների կազմակերպումը	23
Առաջադիմության ցուցանիշներն ըստ ուսումնական կիսամյակների	24
Գերազանց սովորող ուսանողների թվաքանակն ըստ մասնագիտությունների	24
ՀՊՃՀ Կապանի մասնաճյուղի 2012-2016թթ. ռազմավարական պլանով նախանշված առաջընթացի գնահատման կողմնորոշիչ ցուցանիշները և նպատակ 2-ի կատարողականը	26
ՆՊԱՏԱԿ 3. Ապահովել արդի կրթական պահանջներին բավարարող	27

դասախոսական կազմ, կառավարման օպտիմալ և արդյունավետ համակարգ	
ԽՆԴԻՐ 3.1. Շարունակել բարելավել և համալրել դասախոսական կազմը՝ արդի կրթական պահանջներին համապատասխան	27
ԽՆԴԻՐ 3.2. Ապահովել հաստիքների օպտիմալ օգտագործում և վարչակազմի շարունակական համալրում ու որակական առաջընթաց	28
ԽՆԴԻՐ 3.3. Բարձրացնել մասնաճյուղի կառավարման համակարգի արդյունավետությունն ու որակը	31
Մասնաճյուղի կառավարման համակարգի արդյունավետության և որակի բարձրացմանը միտված պլանավորման միջոցառումները	32
Մասնաճյուղի կառավարման համակարգի արդյունավետության բարցրացմանն ուղղված կառուցվածքային փոփոխությունները	32
Մասնաճյուղի գործունեության իրավական-նորմատիվային կարգավորումը	32
Մասնաճյուղի կառավարման մարմինների գործունեությունը	33
ԽՆԴԻՐ 3.4. Զարգացնել ուսանողական ինքնավարությունը, ընդլայնել ուսանողների մասնակցությունը մասնաճյուղի կառավարմանը	33
Տեղեկատվություն 2013/14 ուսումնական տարում մասնաճյուղի ուսումնական ստորաբաժանումների ղեկավար, պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմերի վերաբերյալ	34
ՀՊՃՀ Կապանի մասնաճյուղի 2012-2016թթ. ռազմավարական պլանով նախանշված առաջընթացի գնահատման կողմնորոշիչ ցուցանիշները և նպատակ 3-ի կատարողականը	40
ՆՊԱՏԱԿ 4. Ձևավորել կրթական և հետազոտական ծրագրերի համապատասխանող նյութատեխնիկական բազա, ապահովել սոցիալական ծրագրերի շարունակական զարգացում և ինֆրակառուցվածքի պատշաճ մակարդակ	41
ԽՆԴԻՐ 4.1. Մասնաճյուղում բարելավել ուսումնական գործընթացի իրականացման նյութատեխնիկական պայմանները:	41
ԽՆԴԻՐ 4.2. Զարգացնել և արդիականացնել մասնաճյուղի ուսումնագիտական լաբորատոր բազան:	44
ԽՆԴԻՐ 4.3. Բարձրացնել աշխատակիցների սոցիալական բավարարվածության մակարդակը, բազմազան դարձնել սոցիալական ծրագրերը, զարգացնել սոցիալական ինֆրակառուցվածքը	44
Տեղեկատվություն 2013/14 ուսումնական տարում մասնաճյուղի մեթոդական-հրատարակչական գործունեության և ուսումնագիտական լաբորատոր բազայի վերաբերյալ	45
ՀՊՃՀ Կապանի մասնաճյուղի 2012-2016թթ. ռազմավարական պլանով նախանշված առաջընթացի գնահատման կողմնորոշիչ ցուցանիշները և նպատակ 4-ի կատարողականը	47
ՆՊԱՏԱԿ 5. Ապահովել ֆինանսական կայունություն և ձևավորել օպտիմալ ֆինանսական համակարգ	48
ԽՆԴԻՐ 5.1. Ներդաշնակեցնել ֆինանսական պլանավորումը մասնաճյուղի ռազմավարական նպատակներին և խնդիրներին	48
Մասնաճյուղի զարգացմանն ուղղված միջոցներ	53
Ինֆրակառուցվածքի պահպանմանը և շահագործմանն ուղղված միջոցներ	53
ԽՆԴԻՐ 5.2. Մեծացնել մասնաճյուղի ֆինանսական միջոցների ներհոսքը և բազմազան դարձնել դրանց աղբյուրները	53
ԽՆԴԻՐ 5.3. Բարձրացնել մասնաճյուղի ֆինանսական ռեսուրսների	54

կառավարման և օգտագործման արդյունավետությունը ՀՊՃՀ Կապանի մասնաճյուղի 2012-2016թթ. ռազմավարական պլանով նախանշված առաջընթացի գնահատման կողմնորոշիչ ցուցանիշները և նպատակ 5-ի կատարողականը	55
ՆՊԱՏԱԿ 6. Մասնաճյուղն ապահովել արդի պահանջներին համահունչ տեղեկատվական ռեսուրսներով, իրականացնել տեղեկատվական տեխնոլոգիաների արդյունավետ կիրառում	56
ԽՆԴԻՐ 6.1. Ապահովել տեղեկատվական տեխնոլոգիաների ընդլայնված և արդյունավետ օգտագործումը մասնաճյուղի կրթական և գիտական գործընթացներում	56
ԽՆԴԻՐ 6.2. Զարգացնել մասնաճյուղի տեղեկատվական ռեսուրսները և ապահովել դրանց մատչելիությունն ու օգտագործման արդյունավետությունը	56
Մասնաճյուղի համակարգչային համակազմը և ներքին համակարգչային ցանցը	57
Ինֆորմացիայի տարածումը տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ	58
ԽՆԴԻՐ 6.3. Ապահովել ՀՊՃՀ-ում ձևավորված միասնական տեղեկատվական համակարգի ներդրումը մասնաճյուղում	58
ԽՆԴԻՐ 6.4. Աշխատանքներ տանել տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի տարածաշրջանային ռեսուրսային կենտրոն դառնալու նպատակով	58
Առաջարկություններ	60
ՀՊՃՀ Կապանի մասնաճյուղի 2012-2016թթ. ռազմավարական պլանով նախանշված առաջընթացի գնահատման կողմնորոշիչ ցուցանիշները և նպատակ 6-ի կատարողականը	61
ՆՊԱՏԱԿ 7. Զարգացնել մասնաճյուղի գիտական ներուժը և մասնաճյուղ- տնտեսություն հետազոտական կապերը, աշխատանքներ տանել միջազգային գիտական ծրագրերում ընդգրկվելու ուղղությամբ	62
ԽՆԴԻՐ 7.1. Ապահովել մասնաճյուղի գիտական ներուժի ու նյութատեխնիկական բազայի զարգացումը և գիտահետազոտական աշխատանքներում դասախոսական կազմի ներգրավվածության ընդլայնումը	62
ԽՆԴԻՐ 7.2. Խթանել մասնաճյուղի կիրառական հետազոտությունների իրականացումը և արդյունավետության բարձրացումը, նպաստել արդյունքների առևտրայինացմանը	63
ԽՆԴԻՐ 7.3. Ապահովել մասնաճյուղի ներգրավվածությունը միջազգային գիտական ծրագրերում	64
Տեղեկատվություն 2013/14 ուսումնական տարում մասնաճյուղի գիտահետազոտական գործունեության վերաբերյալ	65
Առաջարկություններ	66
ՀՊՃՀ Կապանի մասնաճյուղի 2012-2016թթ. ռազմավարական պլանով նախանշված առաջընթացի գնահատման կողմնորոշիչ ցուցանիշները և նպատակ 7-ի կատարողականը	70
ՆՊԱՏԱԿ 8. Ընդլայնել գործընկերային կապերը, մասնաճյուղի զարգացման ծրագրերում ապահովել արտաքին օժանդակություն, զարգացնել հանրային ներգրավվածությունը և մասնակցությունը միջազգային համագործակցության ծրագրերին	71
ԽՆԴԻՐ 8.1. Ամրապնդել և ընդլայնել մասնաճյուղի գործընկերային կապերը տարածաշրջանի արտադրական ձեռնարկությունների, այլ կազմակերպությունների և հանրային կառույցների հետ	71
ԽՆԴԻՐ 8.2. Մասնաճյուղի զարգացման ծրագրերում շրջանավարտների,	73

նվիրատու և հովանավոր կազմակերպությունների ու անհատների ներդրումների իրականացման ուղղությամբ աշխատանքների իրականացում	
ԽՆԴԻՐ 8.3. Ձարգացնել հասարակության հետ մասնաճյուղի կապերը, ապահովել հանրային ծրագրերում մասնաճյուղի առավելագույն ներգրավումը:	73
ԽՆԴԻՐ 8.4. Ձգտել ապահովելու մասնաճյուղի պատշաճ մասնակցությունը ՀՊՃՀ-ի միջազգային համագործակցության ծրագրերին, նպաստել Բոլոնիայի գործընթացի հայաստանյան զարգացումներում ՀՊՃՀ-ի առաջատար դերի պահպանմանը	74
ՀՊՃՀ Կապանի մասնաճյուղի 2012-2016թթ. ռազմավարական պլանով նախանշված առաջընթացի գնահատման կողմնորոշիչ ցուցանիշները և նպատակ 8-ի կատարողականը	75
Եզրակացություններ և առաջարկություններ	77
Հավելված 1	79